5. *Ռաբբի* «վարադապետ, ուսուցիչ» - *ռաբբի* (նույնը), *ռաբ(բ)ունի* «վարդապետ իմ, տե՛ր իմ» - *ռաբունի* (նույնը), *ռահվար* «արագընթաց ձի» - *րահվար* (նույնը) բառային տարբերակների առկայությունը²¹ կարող է հիմք տալ *n* (ր)-ի և *p* (ր)-ի միջև, հակադրական (= հնչույթաբանական) հարաբերություններից բացի, տարբերակելու նաև *ազատ փոփոխական* (*free variation* / *свободное варьирование*) հարաբերություններ: Առաջին երկուսը՝ *ռաբբի* (/րաբբի/), *ռաբ(բ)ունի* (/րաբունի/), եբրայական փոխառություններ են²², համապատասխանաբար՝ *rabbi*, *rabbōnī* / *ribbōnī* ձևերից: Դրանք միջնորդավորված են «յն. *רַבִּי* տառադարձությունից»²³ և, ըստ ամենայնի, հայերենին անցել են Աստվածաշնչի՝ հին հունարենից կատարված թարգմանության միջոցով: *Ռահվար* (/րահվար/)-ը փոխառություն է իրանական *rahvār* ձևից²⁴ և մեծ հավանականությամբ հայերենին է անցել բանավոր խոսքի (= խոսակցական լեզվի) միջոցով: Երկու տարբեր ճանապարհներով լեզվին անցած բառերում տեղի ունեցած միատեսակ հնչունական փոփոխությունը, որը հանգեցրել է բառային տարբերակների առաջացման, տրամաբանորեն պիտի ունենար ընդհանուր պատճառ, սակայն, ըստ իս, այս դեպքում դժվար է նման պնդում անելը, որովհետև եթե հավանական է *ռահվար* (/րահվար/)-ի գործածությունը գրավոր խոսքում, ապա հավանական չէ *ռաբբի* (/րաբբի/), *ռաբ(բ)ունի* (/րաբունի/) բառերի գործածությունը ժողովրդախոսակցական լեզվում՝ վերջինների խիստ-գրքային բնույթի և նեղուղորտային կիրառության պատճառով: Բացի այդ, ընդհանուր պատճառի (համաբանության ?) դեպքում հազիվ թե տարբերակների թիվը սահմանափակվեր 2-ով (*ռաբ(բ)ունի* (/րաբունի/)-ին կազմվել է *ռաբբի* (/րաբբի/)-ի հիմքից): Հավանական է, որ եբրայական փոխառությունների տարբերակային ձևերից մեկը, թերևս՝ *p* (ր)-ովը, առաջացել է ավելի ուշ և տարբերություն, այլ կերպ՝ տարբեր գրադարձման արդյունք է, իսկ իրանականը խոսակցական լեզվի տարբերակներում (= խոսվածքներում ?) առաջացող ոչ միատեսակ արտասանության արդյունք է, այլ կերպ՝ բարբառային դրսևորում: Ի վերջո, պիտի նկատի ունենալ, որ հայերենի և՛ *n* (ր)-ն, և՛ *p* (ր)-ն առաջացել են հ.-ե. միևնույն **r* ձայնորդ հնչույթից²⁵ և չպիտի բացառել մեկի հնարավոր կիրառությունը մյուսի փոխարեն:

6. Նկատելի է միտում, որ ռնգային *n* (ն)-ին նախորդող դիրքում առավելապես հանդիպում է *n* (ր), իսկ մյուս բաղաձայններին, այդ թվում ռնգային *u* (մ)-

²¹ Օրինակներն ըստ՝ Աճառյան, Հ. ՀԱԲ, հ. IV, էջ 137-139, 443-445, Զահուկյան, Գ. ՀԱԲ, էջ 655-659, 739, ԱԲՀԼ, էջ 708, 794-795, Ղազարեան Ռ., ԳԲ, էջ 1107-1108, 1249:

²² Տե՛ս Աճառյան, Հ. ՀԱԲ, IV, էջ 137, Հյուբշման, Հ. ՀԲ, էջ 375, Զահուկյան, Գ. ՀԱԲ, էջ 655:

²³ Աճառյան, Հ. նույն տեղում:

²⁴ Տե՛ս Աճառյան, Հ. նույն տեղում, էջ 139, Զահուկյան, Գ. նույն տեղում:

²⁵ Տե՛ս Պետրոսյան, Վ. Հին հայերենի *p* (ր), *n* (ր) նայականների և *u* (մ), *n* (ն) ռնգայինների ծագումը և հնչաբանական արժեքայնությունը // «Հայագիտության հարցեր», թիվ 1(13), 2018, էջ 140-147:

ին, և ձայնավորներին նախորդող դիրքում՝ *ր* (*ր*) ձայնորդը (հմմտ. *ամառն*, բայց՝ *ամառան*, այդպես էլ՝ *դուռն* - *դուրք* (/դրունք), *դառնամ* - *դարձ*, *եղենն* - *եղեքան*, *ձմեռն* - *ձմեքան*, *ձեռն* - *ձեքք*²⁶, *մատուռն* - *մատրան*, *ոլոռն* «ոլոռ բույսը. ոլոռի ունդը» - *ոլորան*, *առնեմ* - *արարի*, *դառնամ* - *դարձի*²⁷, *ընթեռնում* - *ընթեքցայ*, *ջեռնում* - *ջեքմն* և այլն): Ինչպես նկատել է պրոֆ. Աղայանը, այս երևույթը կարող էր հիմք տալ խոսելու *ռ* (*ր*)-ի և *ր* (*ր*)-ի միջև նաև դիրքային բաշխվածության, այլ կերպ՝ այլահնչակային հարաբերությունների առկայության մասին, բայց որովհետև այդ միտումը հետևողական չէ՝ որոշ դեպքերում խախտվում է (հմմտ. *ամառան*, *եղենան*, *ոլոռան*), իսկ որոշ դեպքերում էլ պարզապես *ռ* > *ր* անցում տեղի չի ունենում (հմմտ. *զեռումն* «զեռալը» - *զեռման*, *լիսենն* - *լիսռան*, *խուռն* - *խռան*, *ծիծառն* - *ծիծռան*, *ճպուռն* - *ճիպռան*, *ուռն* - *ուռան* և այլն), ապա լրացուցիչ բաշխման հարաբերությունների մասին խոսելու բավարար հիմքեր նույնպես չկան:

7. *Ամառն* // *ամառան*, *դուռն* // *դուրք* (/դրունք), *դառնամ* // *դարձ*, *եղենն* // *եղեքան*, *ձմեռն* // *ձմեքան*, *ձեռն* // *ձեքք*, *մատուռն* // *մատրան*, *ոլոռն* «ոլոռ բույսը. ոլոռի ունդը» // *ոլորան* (ոլորան), *առնեմ* // *արարի*, *բառնամ* // *բարձի*, *դառնամ* // *դարձի*, *ընթեռնում* // *ընթեքցայ*, *ջեռնում* // *ջեքմ* տիպի օրինակները հիմք են տալիս խոսելու *ռ* (*ր*)-ի և *ր* (*ր*)-ի միջև մակարդակային այլ տիպի հարաբերությունների՝ *ձևահնչությաբանական հերթագայությունների* և ըստ այդմ՝ <Ռ(Ր)/Դ(Ր)> *ձևահնչության* (*morphoneme / морфонема*)՝ որպես լեզվական կառուցվածքի ավելի բարձր մակարդակի՝ *ձևահնչությաբանության* (*morphology / морфология*) միավորի մասին²⁸: Նշված օրինակներում *ռ* (*ր*)-ն և *ր* (*ր*)-ն բաղադրում են միևնույն հիմնական ձևային դիրքային տարբերակներից մեկը, այն է՝ հիմքը՝ ա) գոյականի ուղիղ և թեք (սեռ.-տր. և գործ.) հոլովաձևերում (հմմտ. *ամառն* // *ամառան*, *դուռն* // *դուրք* (/դրունք), *դառնամ* // *դարձ*, *եղենն* // *եղեքան*, *ձմեռն* // *ձմեքան*, *ձեռն* // *ձեքք*, *մատուռն* // *մատրան*, *ոլոռն* // *ոլարան*) և բ) բայի խոնարհման՝ ներկայի և անցյալ կատարյալի ձևերում (հմմտ. *առնեմ* // *արարի*, *բառնամ* // *բարձի*, *դառնամ* // *դարձի*, *ընթեռնում* // *ընթեքցայ*). *ջեռնում* // *ջեքմն* հարաբերակցության դեպքում *ռ* // *ր* հերթագայությունը փոխում է նաև խոսքամասային հիմքը՝ առաջացնելով *բայահիմք* - *գոյականական հիմք* առնչություն:

²⁶ Ձեքք-ը եղել է եզ. գրծ. հին ձևը հայերենում, որից կազմվել են բարդությունները: Գրաբարյան ձևն էր *ձեռաւք* (տե՛ս Աճառյան, Շ. Լիակատար քերականություն հայոց լեզվի, Կ. III, Եր., 1957, էջ 414):

²⁷ Դառնամի ավելի հին ձևն է **դարձնամ* (< **dhǝǵh-nā-mi*) (տե՛ս Զահուկյան, Գ. ՀԼՊՆԺ, էջ 120), որը ցույց է տալիս, որ *ր* (*ր*)/*ռ* (*ր*) հերթագայությունը տեղի է ունեցել է ձ-ի անկումից հետո, երբ *ր* (*ր*)-ն հայտնվել է *ն* (*ռ*)-ին նախորդող դիրքում:

²⁸ Ձևահնչության և ձևահնչությաբանական հերթագայության մասին տե՛ս Պետրոսյան, Վ. Ձևահնչության և ձևահնչությաբանության լեզվաբանական կարգավիճակը // «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 3, 2009, էջ 96-105 (հմմտ. *նույնի*՝ Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., 2015, էջ 118-130):

Վերոշարադրյալը հիմք է տալիս եզրակացնելու հետևյալը.

1) Գրաբարյան հայերենի n ($\dot{r}$) և p (r) ձայնորդները այդ լեզվի հնչույթային համակարգի լիարժեք բաղադրիչներ էին, որովհետև գործառական (= հնչույթային) հակադրություններ են ձևավորել բոլոր երեք դիրքերում՝ բառասկզբի, բառամիջի և բառավերջի: Հատկապես վերջին երկուսը հիմնավորվում են բազմաթիվ օրինակներով:

2) Բառասկզբի դիրքում նշված ձայնորդների հնչույթային գործառույթի բացառման մասին միտքը, կարծում ենք, ունեցել է երկու պատճառ. ա) հիմնախնդրի քննությունը համաժամանակյա հայեցակերպից տարածամանակյա հայեցակերպ տեղափոխելը. բ) լեզվական փաստերի ոչ բավարար ուսումնասիրվածությունը:

3) Առանձին դեպքերում n ($\dot{r}$)-ի և p (r)-ի՝ միևնույն դիրքում հանդիպելիությունը ոչ տարբերակիչ գործառույթով հիմք է տալիս խոսելու նաև նրանց միջև գործող *ազատ փոփոխական* հարաբերությունների մասին, թեպետև թույլ արտահայտված:

4) Մի շարք բառերում հերթազայվելով որպես բառարմատի (= հիմնական ձևույթի) դիրքային տարբերակների՝ ձևակների բաղադրիչ՝ n ($\dot{r}$)-ն և p (r)-ն կազմավորում են լեզվական կառուցվածքի ավելի բարձր՝ ձևահնչույթաբանական մակարդակի միավոր՝ $\langle \Omega(\dot{R})/\Gamma(R) \rangle$ ձևահնչույթը:

ВАРДАН ПЕТРОСЯН – Синхронические характеристики сонорных n ($\dot{r}$) и p (r) древнеармянского языка. – Сонорные древнеармянского языка n ($\dot{r}$) и p (r) выполняли фонемную (= смысловоразличительную) функцию не только в позициях в середине и в конце слова, что приняли также предыдущие исследователи (Э.Агаян, Э.Туманян, Г.Мурадян), а также и в начале слова. Исключение фонологической позиции n ($\dot{r}$) и p (r) в начале слова последние обосновывали тем, что исконно армянские слова и древние заимствования не могли начинаться с n ($\dot{r}$) и p (r): они, как правило, получали *аугмент*. Исключением являлось исконно индоевропейское слово *tnlqñ* (< *srung^{h-}) и некоторые иранские заимствования (ср. *niqñ*, *nihiłiriay*, *niwiłi*, *niñiłi*, *niñiwiñiñi*). Во-первых, при синхроническом аспекте с точки зрения различения фонем неважно, встречается ли фонема в исконном или в составе заимствованного слова, однако появление его в дифференциальной функции хотя бы в нескольких словах достаточно для признания его фонологического статуса. С этой точки зрения есть все основания говорить, что n ($\dot{r}$) и p (r) осуществляли полноценную фонемную функцию в позиции в начале слова. Следовательно, между ними ни в какой позиции не могли быть *аллофонические* отношения. Чередование n ($\dot{r}$) и p (r) в позиционных вариантах (= морфах) некоторых корней (= основных морфем) дает основание говорить о существующих между ними *морфонологических* отношениях, следовательно, о существовании *морфемы* $\langle \Omega/\Gamma \rangle$ ($\langle R/R \rangle$). В отдельном случае речь может идти также о слабо выраженных *свободно варьируемых* отношениях между n ($\dot{r}$) и p (r).

Ключевые слова: *фонема, фонологическая позиция, аллофон, дополнительная дистрибуция, свободное варьирование, морфонема.*

VARDAN PETROSYAN – Synchronic Descriptions of Old Armenian Sonorants n ($\dot{r}$) and p (r). – Old Armenian sonorants n ($\dot{r}$) and p (r) served the function of a phoneme (= a meaningful unit) not only in middle, but also at the end of words. This view was supported by previous

investigators, as well (E. Aghayan; E. Toumanyan; H. Muradyan). They excluded the possibility that the beginning of a word could be a phonological position for the sonorants *n* (r) and *ɲ* (r) on the grounds that native Armenian words and old borrowings could not have started with *n* (r) and *ɲ* (r). They, as a rule, acquired an augment. Native IE word *mn̄l̄q* (< **srung*^h-) and certain Iranian borrowings (comp. *nuq̄l*, *nuh̄l̄l̄q̄ay*, *nuh̄l̄l̄q̄*, *mn̄h̄l̄q̄*, *mn̄nūsūsūnūl̄q̄*) were exceptions to the rule. To begin with, in the synchronic approach the classification of the phonemes does not attach any significance to the fact of whether the given phoneme appears in native or borrowed words. Moreover, the presence of a certain phoneme with a distinctive function in even several words is sufficient to recognize its status as a phoneme. In this regard, there are all grounds to say that the sonorants *n* (r) and *ɲ* (r) fully served the function of a phoneme at the beginning of a word, too. As a matter of fact, no *allophonic* relations could exist between them in any position. The order of the *n* (r) and *ɲ* (r) sonorants in the positional forms (= *morphs*) of certain word roots (= *main morphemes*) is an indication of *morphonological* relations between them, hence of the existence of the <ɲ/ɲ> (<R/R>) *morphoneme*. There are also cases of *free variation* relation between *n* (r) and *ɲ* (r).

Key words: *phoneme, phonological position, allophone, additional distribution, free variation, morphoneme.*

Գրականության ցանկ

- Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (1988): Անթիլիաս: (Ardzerin bařaran Haykaznean lezui (1988). Ant'illas).
- Ջահուկյան, Գ. (2010): Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան: (Dzahukyan, G. (2010). Hayeren stugabanakan bařaran, Erevan).
- Ջահուկյան, Գ. (1987): Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան: (Dzahukyan, G. (1987). Hayots' lezu'i patmut'yun: nakhagryayin zhamanakashrjan, Erevan).
- Ջահուկյան, Գ. (1954): Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան: (Dzahukyan, G. (1954). K'erakanakan yev ughagrakan ashkhatut'yunnerē hin yev mijnadaryan Hayastanum, Erevan).
- Աղայան, Է. (1964): Գրաբարի քերականություն, Երևան: (Aghayan, E. (1964). Grabari k'erakanut'yun, Erevan).
- Աճառյան, Հ. (1951): Հայոց լեզվի պատմություն, մաս II, Երևան: (Ačařyan, H. (1951). Hayots' lezu'i patmut'yun, mas II, Erevan).
- Աճառյան, Հ. (1957): Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Երևան: (Ačařyan, H. (1957). Liakatar k'erakanut'yun hayots' lezu'i, h. III, Erevan).
- Աճառյան, Հ. (1979): ՀԱԲ, հ. IV, Եր.: (Ačařyan, H. (1979) HAB, h. IV, Erevan).
- Աճառյան, Հ. (1971): Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Երևան: (Ačařyan H. (1971). Hayeren armatakan bařaran (aysuherēv — HAB), h. 1, Erevan).
- Հյուբշման, Հ. (2003): Հայերենի քերականություն, Երևան: (Hyubshman, H. (2003). Hayereni k'erakanut'yun, Erevan).
- Մուրադյան, Հ. (1982): Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Երևան: (Muradyan, H. (1982). Hayots' lezu'i patmakan k'erakanut'yun, h. I, Erevan).
- Ղազարեան, Ռ. (2004): Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), Անթիլիաս: (Ghazaryan R. (2004). Grabari bařaran (aysuherēv — GB), Ant'illas).
- Նոր բառգիրք հայկազնեան լեզուի (1979): Հ. 1, Երևան: (Nor bařgirk' Haykaznean lezu'i (1979). H. 1, Erevan).
- Պետրոսյան, Վ. (2015): Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Երևան: (Petrosyan, V.

(2015). Ĕndhanur yev hay lezvabanut'yan harts'er, Erevan).

Պետրոսյան, Վ. (2018): Հին հայերենի *ṛ* (*r*), *ṛ* (*ṛ*) նայականների և *u'* (*m*), *u* (*n*) ռնգայինների ծագումը և հնչաբանական արժեքայնությունը // «Հայագիտության հարցեր», թիվ 1(13):

(Petrosyan, V. (2018). Hin hayereni *ṛ* (*ṛ*), *r* (*r*) nayakanneri yev *m* (*m*), *n* (*n*) ṛngayinneri tsagume yev hnch'abanakan arjekaynut'yune // “Hayagitut'yan harts'er”, tiv 1(13)).

Պետրոսյան, Վ. (2009): Ձևահնչոյթի և ձևահնչոյթաբանության լեզվաբանական կարգավիճակը // «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 3: (Petrosyan, V. (2009). Dzevahnhch'uyti yev dzevahnhch'uyt'abanut'yan lezvabanakan kargavijake // “Banber Yerevani hamalsarani”, tiv 3).

Туманян, Э. (1971). Древнеармянский язык. Москва: (Tumanyan, Ĕ. (1971). Drevnearmyanskii yazyk. Moskva).

ԼԵԶՎԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ (գուգադրական վերլուծություն)

ԲԵԼԼԱ ԽՈՋՈՒՄՅԱՆ* 
Երևանի պետական համալսարան

Հոդվածում կատարվում է ռուսերենի և հայերենի դարձվածքների ունիվերսալ թեմատիկ խմբերից մեկի գուգադրական վերլուծություն՝ դրանց միջև համապատասխանություններն ու անհամապատասխանությունները հայտնաբերելու և դրանց պատճառները բացահայտելու նպատակով: Ուսումնասիրության համար հատուկ ընտրված է սումատիկ դարձվածքների թեմատիկ խումբը, քանի որ այն ունի բացահայտ մարդակենտրոն ուղղվածություն, ուստի և լայնորեն ներկայացված է բոլոր լեզուներում: Ուսումնասիրությունն ամբողջությամբ կատարվել է լեզվամշակութաբանության լուսի ներքո՝ կիրառելով գուգադրական մեթոդը: Փորձ է արվել կապ հաստատել ոչ բառային լեզվական նշանների (ոչ վերբալ լեզվաբաղադրիչների) և համապատասխան դարձվածաբանական միավորների միջև: Ուսումնասիրության ընթացքում բավականաչափ ուշադրություն է հատկացվել էթնոլեզվաբանական գործոնին, որը տվյալ դեպքում մեծ դեր է խաղում գուգադրվող միավորների կապը բացահայտելու հարցում: Կոնկրետ նյութի ուսումնասիրությունից եզրակացվում է, որ երկու լեզուներում վերլուծվող միավորների միջև նկատված հակասությունները հիմնականում կապված են ազգային առանձնահատկությունների, մշակութային ավանդույթների և համեմատվող լեզուների լեզվակիրների ազգային մտածելակերպի հետ:

Բանալի բառեր – *սումատիզմ, սումատիկ դարձվածք, վերբալ լեզու, ոչ վերբալ լեզու, համապատասխանություններ, անհամապատասխանություններ, խորհրդանիշ, մտածելակերպ, ազգային առանձնահատկություններ, գուգադրական վերլուծություն*

Դարձվածաբանությունը յուրաքանչյուր լեզվի ամենահարուստ և ամենաարտահայտիչ շերտերից է, որի գլխավոր արժեքն այն է, որ, լինելով շատ հակիրճ և սեղմ, հաճախ արտահայտում է բավականին լայն և խորը իմաստ: Կարելի է ասել, որ դարձվածքները հնարավորինս սեղմ բարդ և խորունկ մտքերի ու հույզերի համալիրի «փաթեթավորում են»: Սակայն, ունենալով

* **Բելլա Խոջումյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ռուսաց լեզվի ամբիոնի դոցենտ

Белла Ходжумян – кандидат филологических наук, доцент кафедры русского языка ЕГУ

Bella Khojumyan – PhD, Associate Professor at YSU Chair of Russian Language

Էլ. փոստ՝ bella-khojumyan@rambler.ru <https://orcid.org/0009-0005-6458-3772>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 20.03.2025

Գրախոսվել է՝ 26.03.2025

Հաստատվել է՝ 02.06.2025

© The Author(s) 2025

նման հակիրճ ձև, դարձվածքների «փաթեթավորումը» ճշգրիտ բացելը և մեկնաբանելն ամենևին էլ դյուրին ու պարզ գործ չէ, քանի որ դրանց իմաստը կախված չէ բաղադրիչներից: Բացի այդ՝ նրանք հիմնված են ժողովրդի դարավոր փորձի վրա, և հենց ժողովուրդն է դրանց շունչ տվել՝ օգտագործելով ազգային ավանդույթներն ու սովորությունները: Դարձվածքներում արտացոլվում են ժողովրդի «շունչը, ոգին», ազգամշակութային առանձնահատկությունները: Յուրաքանչյուր ժողովրդի հատուկ է իր աշխարհընկալումը, որն արտացոլվում է լեզվում՝ այնուհետև ստեղծելով ազգային լեզվապատկեր: Իսկ վերջինիս ձևավորման գործում կարևոր դեր են խաղում դարձվածքները, որոնցում զետեղված են ազգային մտածելակերպի և մշակույթի առանձնահատկությունները: Այդ պատճառով էլ դարձվածքները ճիշտ հասկանալու համար առաջին հերթին անհրաժեշտ է ծանոթ լինել տվյալ ժողովրդի մշակույթին, ավանդույթներին, սովորություններին, ընդունված կարծրատիպերին:

Գերմանացի հայտնի լեզվաբան Վիլհելմ ֆոն Հումբոլդտի առաջ քաշած՝ լեզվի և մշակույթի սերտ կապի հայեցակարգի տեսական հիմունքները [Гумбольдт В. фон 2000] հետագայում զարգացան էթնոլեզվաբանական, լեզվամշակութային և միջմշակութային հաղորդակցման տեսության ոլորտների մի շարք լուրջ ուսումնասիրություններում [Телия 1996, Тер-Минасова 2008, Маслова 2001 и др.]: Որոշ գիտնականներ լեզուն սկսեցին դիտարկել որպես մշակույթ տանող խորհրդանիշ-բանալի [Сенир 1993:262]: Այդ կապակցությամբ Տեր-Մինասովան գրում է. «Լեզուն մշակույթի հայելին է, որում արտացոլվում են ոչ միայն մարդուն շրջապատող իրական աշխարհը, ոչ միայն նրա կյանքի իրական պայմանները, այլ նաև ժողովրդի ինքնագիտակցությունը, նրա մտածելակերպը, ազգային բնավորությունը, ապրելակերպը, ավանդույթները, սովորությունները, բարոյական նորմերը» [Тер-Минасова 2008:14]:

Հայտնի է, որ հաղորդակցման ընթացքում հաճախ օգտագործվում են ոչ վերբալ լեզվի նշաններ, երբեմն էլ առանց վերջինների մասնակցության բանավոր հաղորդակցությունը թերի է թվում: Այլ կերպ ասած՝ ոչ վերբալ նշանները (ժեստերը, դիմախաղը) իրենց զգացմունքային հազեցվածությամբ և արտահայտված պատկերավորությամբ հաճախ նպաստում են վերբալ լեզվով արտահայտված մտքերի ավելի արագ և ճիշտ ընկալմանը: Ահա նման ոչ վերբալ լեզվի նշաններից շատերն էլ ժամանակի ընթացքում տեղ են գտնում դարձվածքներում՝ ստանալով վերբալ լեզվամիջոցների տեսք: Վ. Ն. Տելիան նշում է, որ դարձվածքների՝ որպես լեզվամշակութային նշանների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի խորը ներթափանցելու դրանց լեզվային յուրատեսակություն, գնահատելու դրանց կարևոր դերը հաղորդակցման գործընթացում, նաև բացահայտելու դրանցում թաքնված մշակութային իմաստը, նրանց կապը ազգամշակութային ավանդույթների և կարծրատիպերի հետ: Ըստ գիտնականի՝ «լեզվամշակութային տեսակետից դարձվածքները լեզվի բառապաշարի ամենաինքնատիպ մասն են» [Телия 1993:1]:

Խոսքն ուղեկցող ժեստերն ու դիմախաղը ծանոթ էին դեռ հին աշխարհում՝ իբրև մարդկային տարատեսակ զգացմունքների, հոգեվիճակի, մտքերի արտահայտման զգացմունքային խորհրդանիշներ: Լեզվային արտահայտությունների կազմավորման գործընթացում ակնհայտ մեծ դեր է խաղում մարդկային գործոնը, քանի որ դարձվածքների գերիշխող մասը կապված է մարդու և նրա գործունեության բազմազան ոլորտների հետ: Բացի այդ՝ մարդը շարունակ ձգտում է մարդկային հատկանիշներ վերագրել արտաքին աշխարհի օբյեկտներին, այդ թվում նաև՝ անշունչ: Դեռ Շառլ Բալին նկատել է, որ «մարդկային բանականության հավերժական անկատարությունն արտահայտվում է նաև այն բանում, որ մարդը միշտ ձգտում է շունչ հաղորդել այն ամենին, ինչն իրեն շրջապատում է: Նա չի կարող պատկերացնել, որ բնությունն անկենդան է և անշունչ, նրա երևակայությունն արտաքին աշխարհի բոլոր առարկաներին անդադար վերագրում է սեփական անձին բնորոշ գծեր և ձգտումներ» [Балли III. 2001: 221]:

Սոմատիկ բաղադրիչի լայն կիրառումը դարձվածքների կազմում պայմանավորված է այն բանով, որ սոմատիկ բառերը ցանկացած լեզվի հնագույն շերտերից են և կազմում են լեզվի բառային ֆոնդի միջուկը: Հատկապես հատկանշական է, որ սոմատիկ բառերը մեծ ակտիվություն են ցուցաբերում խորհրդանշային մարմնավորման ոլորտում, քանի որ, ունենալով վառ արտահայտված մարդակենտրոն ուղղվածություն, նրանց հիմնական զանգվածը անմիջականորեն կապված է մարդու հուզական և հոգեբանական վիճակի, ինչպես նաև համապատասխան ժեստային, դիմախաղային և տարատեսակ ծիսական գործողությունների հետ: Սոմատիկ դարձվածքները իրականության տարբեր օբյեկտների, երևույթների և վիճակների անվանման ունիվերսալ միջոցներ են:

Հաշվի առնելով սույն գործոնները՝ հետազոտության համար ընտրվել է հենց սոմատիկ դարձվածքների թեմատիկ խումբը, որը հաճախ ակնհայտորեն կապված է ոչ վերբալ լեզվի նշանների հետ և հանդես է գալիս իբրև վերջիններիս վերբալ հոմանիշ կամ համարժեք:

Վերբալ և ոչ վերբալ խորհրդանշային ծածկագրերը սերտորեն փոխկապված են և մշտապես փոխազդեցության մեջ են, ինչի արդյունքում տեղի է ունենում ժեստերի «դարձվածայնացում», և դրանք տեղափոխվում են անվանական հայեցակետ: Համապատասխան դարձվածքների բաղադրիչ մարմնի մասերի անվանական արտահայտումը և ոչ վերբալ արտահայտման նույն մարմնի մասերը համեմատելիս նրանց միջև բացահայտվում են ինչպես որոշակի նմանություններ, այնպես էլ էական տարբերություններ: Մարմնի մասերին վերաբերող ժեստերին սովորաբար հնարավոր չէ տալ տրամաբանական մեկնաբանություն. դրանք առավելագույնս կապված են տվյալ լեզվամիավորման

Էթնիկական գործոնի հետ, մինչդեռ դարձվածքի կազմում այս կամ այն մարմնի մասի անվանման առկայությունը կարող է ունենալ տրամաբանական հստակ բացատրություն:

Մարդկային զգացմունքները և հույզերը կարելի է դիտարկել որպես մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցության իրական գործընթացի արտացոլման յուրատեսակ ձև, իսկ դրանք հաճախ ուղեկցվում են տարատեսակ արտահայտիչ շարժումներով, ինչպիսիք են դիմախաղը, ժեստերը, մարմնի շարժումները, որոնք հաճախ համընկնում են տարբեր լեզվամշակութակիրների շրջանում, քանի որ նման դարձվածքների հիմքում ընկած ոչ վերբալ նշանների որոշակի մասը հայտնի է որպես համամարդկային ժեստեր, և այդ իսկ պատճառով հասկանալի են տարբեր ժողովուրդներին: Օրինակ՝ *մատ թափ տալ* – *погрозыть пальцем* (բարկության ժեստ), *գլխով անել* – *кивнуть головой* (համաձայնության ժեստ) և այլն: Եթե փորձենք ավելի ուշադիր դիտել, ապա բավականին հասկանալի և բնական է այն, որ, անկախ ազգությունից, օրինակ, սրտանց ուրախացող մարդու աչքերը կլորանում և փայլում են, իսկ բարկության ժամանակ մարդը կիտում է հոնքերը, սեղմում ատամները և այլն:

Սոմատիկ դարձվածքների համընկնումը տարբեր լեզուներում կարելի է բացատրել ոչ միայն հույզերի և զգացմունքների արտահայտման համամարդկային գործոնով, այլև համամարդկային փոխառության փաստով, ընդհանուր օրինաչափությամբ, որի արդյունքում առաջանում են ազգակից ունիվերսալ դարձվածքներ: Սոմատիկ դարձվածքների լայն տարածվածությունը տարբեր լեզուներում բնական է, քանի որ նրանց բաղադրիչներից մեկը՝ «սոմատիկ» բառը, ունի փոխաբերման մեծ ունակություն: Սակայն փոխաբերություն ստեղծելիս սոմատիզմների արդյունավետության աստիճանը տարբեր է. մարմնի որոշ մասերի անվանումներ ավելի հազվադեպ են օգտագործվում (*плечо* – *ուի*, *кулак* – *բռունցք*, *дворзаша* – *պառա* և այլն), և հակառակը՝ մյուսները լայն կիրառում ունեն (*голова* – *գլուխ*, *глаз* – *աչք*, *нос* – *քիթ*, *рот* – *բերան*, *язык* – *լեզու*, *рука* – *ձեռք*, *нога* – *ուրթ*): Խորքային վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել արդյունավետությամբ աչքի են ընկնում այն սոմատիզմները, որոնց գործառնությունները հստակ են և կարևոր, ինչի պատճառով էլ վերջիններս հեշտությամբ վերաիմաստավորվում են:

Սոմատիզմների գործառնությունները, դրանցով արտահայտված հասկացությունները տարբեր ժողովուրդների մեջ հիմնականում համընկնում են, սակայն, դրա հետ մեկտեղ, մեծ դեր ունի ազգային գործոնը, որով հաճախ էլ պայմանավորված է սոմատիկ դարձվածքների իմաստային տարբերությունը տարբեր լեզվակիրների շրջանում: Յուրաքանչյուր լեզվում սոմատիզմները կարող են նորովի կիրառվել՝ պայմանավորված լեզվում ընդունված այս կամ այն խորհրդանշով: Ընդգրկվելով դարձվածքներում որպես բաղադրիչ՝ նրանք «հստակեցնում են» իրենց գործառնությունները, իսկ տվյալ լեզվակիրներն այն ընդունում են որպես իրողություն: Օրինակ՝ Իտալիայում քաջությունը ասոցացվում է

յարդի հետ, իսկ Ֆրանսիայում՝ ստամոքսի: Որևէ այլ էթնիկ խմբի համար նման կապը կարող է թվալ անհասկանալի, անբացատրելի և նույնիսկ անհեթեթ: Ահա թե ինչու շատ դարձվածքներ անհնար է բառացի թարգմանել՝ անկախ այդ լեզուների ազգակցականության և նրանցում ներառված սոմատիզմների պարզության ու հստակության աստիճանից: Այդ տեսանկյունից հնարավոր է թվում զուգահեռ անցկացնելը դարձվածաբանության և պոեզիայի միջև: Ո՞րն է պատճառը, որ բնօրինակը և թարգմանությունը տարբեր ձևով են ընկալվում: Ինչո՞ւ է բնօրինակը միշտ հնչում ավելի մեղեդային, իսկ թարգմանության մեջ զգացվում է աններդաշնակություն: Կարծում ենք՝ պատճառը տվյալ լեզվի ազգային առանձնահատկություններն են, ազգային գուներանգը, որը ոչ ոք չի կարող զգալ, հետևաբար և արտահայտել այնքան լավ, դիպուկ և վառ, որքան այն մարդը, որի համար այդ լեզուն հարագատ է: Նույնիսկ շատ արհեստավարժ թարգմանությունը հաճախ թերի է թվում հենց ազգային կոլորիտի պակասության պատճառով: Ահա թե ինչու բոլոր ժամանակների հայտնի թարգմանիչներն աշխատում էին չթարգմանել այն բառերն ու արտահայտությունները, որոնց ոճային համարժեքները դժվար կամ անգամ անհնար է գտնել թարգմանության լեզվում: Օրինակ՝ զուգադրենք Սայաթ-Նովայի քառատողը նրա ռուսերեն թարգմանության հետ.

*Աշխարհումս ախ չիմ քաշի,
Քանի վուր ջան իս ինձ ամա,
Անմահական ջրով լիքը
Օսկե փնջան իս ինձ ամա:*

*Я в жизни вздоха не издам,
Доколе джан ты для меня,
Наполненный святой водой
Златой пинджан ты для меня.*

Այն, որ թարգմանիչը չի թարգմանել «ջան» բառը, խոսում է նրա վարպետության մասին, քանի որ ոչ մի այլ լեզվում հնարավոր չէ գտնել նման բառ կամ արտահայտություն, որը կարտահայտի բնօրինակի ամբողջ խորությունը, քանի որ միայն հայը կարող է ճիշտ հասկանալ և զգալ այդ կարճ բառի խորքային իմաստը և զգալ նրա անհուն «ներքին ջերմությունը»:

Գրեթե նույնը տեղի է ունենում դարձվածաբանության ոլորտում. եթե փորձենք հայերեն թարգմանել ռուսական դարձվածքը, կունենանք ազգային առանձնահատկության և ոճային երանգավորման ակնառու կորուստ, իսկ հաճախ էլ նման թարգմանությունն աչքի է ընկնում եթե ոչ զգալի, ապա որոշակի անհեթեթությամբ:

Ինչպես ցանկացած լեզվի միավոր, դարձվածքները գործածվելիս ենթարկվում են ընդունված լեզվային նորմերին և ըստ դրանց՝ ամրագրված են լեզվի դարձվածային համակարգում, սակայն խոսակցական լեզվում երբեմն կարող են ընդունել այլ ձև: Տրամաբանական է մտածել, որ ցանկացած շեղում նորմից պետք է համարվի ոչ նորմատիվ գործածություն, սակայն այս դեպքում, երբ խոսքը գործածման տարբեր ոլորտների մասին է՝ լեզվի և խոսքի, մեր մոտեցումը պետք է տարբերվի: Խնդիրն այն է, որ խոսքի սահմանները բավականին

լայն են և շարժուն. այստեղ կարող են տեղ գտնել դարձվածքի անհատական կամ հեղինակային օգտագործում, նրա նորմատիվ ձևի փոխակերպում, տարատեսակ փոփոխություններ դարձվածքում և այլն: Կարևոր է նաև նշել, որ դարձվածքի նշված փոխակերպումները ծառայում են որոշակի նպատակների. կոչված են նոր երանգ մտցնելու, հաղորդելու լրացուցիչ կոլորիտ կամ նշվում են որպես խոսակցական և այլն: Եվ անհա պարզվում է, որ նման շեղումները չեն կարող որակավորվել որպես դարձվածքի ոչ նորմատիվ օգտագործում: Սակայն երբեմն դարձվածքում տեղ գտած փոփոխությունները կարող են աղավաղել և անգամ փոխել դրա իմաստը, ուստի այդ դեպքում անհրաժեշտ է պարզել փոփոխությունների բնույթն ու նպատակը: Բացի այդ՝ դարձվածքի սխալ օգտագործումը խոսքում կարող է բխել լեզվին չտիրապետելուց կամ դարձվածքի իմաստը չհասկանալուց:

Ուսումնասիրվող թեմատիկ խմբի դարձվածքների զուգադրական վերլուծության ընթացքում ակնհայտորեն պարզ է դառնում, որ ռուսերենի և հայերենի նշյալ տիպի դարձվածքների հիմնական միավորող գործոնը իմաստակառուցվածքային միատիպությունն է: Զուգադրվող միավորումների համարժեքությունը երբեմն նաև կարող է առաջանալ սոմատիկ բաղադրիչի փոխարինման հետևանքով: Օրինակ՝ ժամանակակից հայերենում հայտնի է «թեթև ոտք» դարձվածքը [Սուքիասյան Ա., Գալստյան Ս., 1975, Բեդիրյան Պ., 2011], որն իմաստով համարժեք է ռուսերենի «легкая рука» դարձվածքին: Այս դեպքում տրամաբանական վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ եթե ռուսական լեզվաիրականության մեջ հաջողությունը կապվում է ձեռքի հետ, ապա հայերենում՝ ստորին վերջույթի: Հարկ է նշել, որ բառարաններում արձանագրված է նաև ռուսերենի «легкая рука» սոմատիկ դարձվածքին համարժեք «թեթև ձեռք» դարձվածքը, որն ամենայն հավանականությամբ պատճենված է ռուսերենից:

Հետագա վերլուծության ընթացքում զուգադրվող դարձվածքների միջև բացահայտվում են տարատեսակ անհամապատասխանություններ:

Հոդվածում առանձնացվել են ռուսերեն և հայերեն սոմատիկ դարձվածքների միջև առկա անհամապատասխանության առավել հետաքրքիր դեպքեր, որոնց պատճառը, մեր կարծիքով, պետք է փնտրել տվյալ լեզուների ազգային առանձնահատկության և լեզվակիրների աշխարհընկալման մեջ:

Սոմատիկ դարձվածքներն իրենց կազմում պարտադիր ներառում են սոմատիկ բաղադրիչ՝ մարդու դեմքի կամ մարմնի մասեր անվանող բառ, որը համընկնում է բոլոր լեզուներում: Օրինակ՝ մարդու վերին վերջույթներն անվանելու համար հայերենում օգտագործվում է «*ձեռք*» բառը, ռուսերենում՝ «*рука*», տեսողական օրգանի անվանման համար հայերենում օգտագործվում է «*աչք*» բառը, ռուսերենում՝ «*глаз*» և այլն: Անհերքելի է, որ մարմնի նշված մասերը երկու լեզուներում էլ ունեն նույն գործառնությունը և տարբերվում են միայն իրենց

անվանումներով, որոնք համապատասխանաբար կազմված են յուրաքանչյուր լեզվի կանոններով:

1. Տրամաբանորեն կարելի է ենթադրել, որ գուգադրվող դարձվածքներում պարտադիր է սոմատիկ բաղադրիչի ատկայությունը, մինչդեռ վերլուծության արդյունքում պարզվում է, որ ռուսերենի և հայերենի համարժեք դարձվածքները միմյանցից տարբերվում են հենց սոմատիկ բաղադրիչով՝ պահպանելով սակայն հոմանիշությունը: Օրինակ՝

зарубить себе на носу – ականջին օղ անել - (ռուսերենում՝ *нос*, հայերենում՝ *ականջ*)

мизинца не стоит – եղունգը չարժե (ռուսերենում՝ *мизинец*, հայերենում՝ *եղունգ*)

с глазу на глаз – երես առ երես (ռուսերենում՝ *глаз*, հայերենում՝ *երես*)

вверх ногами – գլխիվայր (ռուսերենում՝ *нога*, հայերենում՝ *գլուխ*):

с ног до головы – ոտքից գլուխ:

Հատկապես ուշագրավ են վերջին երկու օրինակները, որոնցից առաջինում թեև գուգադրվող լեզուներում օգտագործված են տարբեր սոմատիզմներ, բայց դարձվածքների իմաստային համարժեքությունը լիովին պահպանված է պարզ տրամաբանությամբ. երկու դեպքում էլ ստանում ենք նույն պատկերը՝ գլուխը ներքևում, ոտքերը՝ վերևում: Վերջին օրինակում երկու լեզուներում էլ օգտագործված են նույն սոմատիկ բաղադրիչները, բայց հակառակ հերթականությամբ, ինչը ևս որևէ կերպ չի խոչընդոտում դարձվածքի ճիշտ ընկալումը, քանի որ այստեղ խոսքը նայելու, զննելու, ուսումնասիրելու մասին է և լայն իմաստով նշանակում է «ամբողջությամբ», իսկ թե ինչպես է դա կատարվում՝ վերևից ներքև (ռուսերենում), թե հակառակը (հայերենում) կարևոր չէ, որովհետև այս օրինակում ևս ակնհայտ է հայերեն և ռուսերեն դարձվածքների լիակատար համարժեքությունը. երկուսում էլ բացահայտ երևում է ամբողջության իմաստը:

2. Բացի սոմատիկ բաղադրիչը այլ սոմատիկ բաղադրիչով փոխարինելուց՝ գուգադրվող դարձվածքների անհամապատասխանության պատճառ կարող է լինել մեկ այլ երևույթ, այն է՝ երբ սոմատիկ դարձվածքի հոմանիշը կամ համարժեքը մյուս լեզվում ևս ներկայացված է դարձվածքով, բայց ոչ սոմատիկ: Օրինակ՝

бить себя в грудь – իրեն ճղել

сложить руки – մի կողմ քաշվել:

3. Զուգադրվող դարձվածքների միջև ավելի լուրջ անհամապատասխանության պատճառ կարող է լինել լեզվի մակարդակների տեղաշարժը, այլ կերպ ասած՝ երբ ռուսերեն դարձվածքի հայերեն համարժեքն արտահայտված է ոչ թե դարձվածքով, այլ լեզվի ուրիշ մակարդակների միավորներով՝ բառով

(բառագիտական մակարդակ) կամ նկարագրության միջոցով (շարահյուսական մակարդակ): Օրինակ՝

тугой на ухо – վատ լսող, ни в зуб(ногой) – բան չիմանալ:

4. Զուգադրվող լեզուների որոշ սոմատիկ դարձվածքների միջև նկատվող անհամապատասխանությունները կարող են նաև պատմականորեն պայմանավորված լինել: Օրինակ՝ ռուսական սոմատիկ դարձվածքներից շատերը, որոնք լայնորեն տարածված են, հայերենի դարձվածքային համակարգում չեն արտացոլվել: Տվյալ դեպքում մենք հակված ենք ենթադրելու, որ այս երևույթի պատճառը կարող է լինել նման իրողությունների բացակայությունը հայկական իրականության մեջ: Օրինակ՝ ռուսերենի *косая сажень в плечах* դարձվածքի հիմքում որպես բաղադրիչ օգտագործված է հին ռուսական չափման միավորի անվանումը, որն ընդունելի, ուստի և ընկալելի է միայն տվյալ լեզվակիրներին:

Այսպիսով, զուգադրվող ռուսերեն և հայերեն դարձվածքների միջև առկա անհամապատասխանությունները հիմնականում բխում են ազգային առանձնահատկություններից, տվյալ լեզվակիրների աշխարհընկալումից և լեզուների անցած պատմական տարբեր ուղիներից:

Ռուս-հայերեն դարձվածքների բառարաններում ռուսերեն սոմատիկ դարձվածքի հայերեն համարժեքի բացակայության դեպքում երբեմն առաջարկվում է դրա բառացի թարգմանությունը, ինչը համարվում է լեզվի դարձվածաբանական նորմերի որոշ չափով խախտում, քանի որ նման տարբերակը չի կարող սպառիչ պատկերացում տալ տվյալ դարձվածքի բնույթի մասին՝ շրջանցելով ռճային այն կարևոր երանգավորումը, որը հաճախ ապահովում է նաև դարձվածքի իմաստը: Արդյունքում թարգմանված դարձվածքը կորցնում է բուն իմաստը կամ ստանում է ազատ բառակապակցության ձև, որը կորցնում է կապը թարգմանվող դարձվածքի հետ: Օրինակ՝ *иметь голову на плечах* – *ուսերի վրա գլուխ ունենալ:*

Ուսումնասիրության ընթացքում հաջողվել է բացահայտել բազմաթիվ դեպքեր, երբ ռուսերեն սոմատիկ դարձվածքը հայերենում ունի մեկից ավելի դարձվածային համարժեքներ՝ տարբեր սոմատիկ բաղադրիչներով, որտեղ, որպես կանոն, նման համարժեքներից մեկը միշտ առանձնանում է լեզվում օգտագործվելու հաճախականությամբ և ավելի լայնորեն է կիրառվում խոսքում: Օրինակ՝ համեմատենք՝

ни в одном глазу – տեսքից չերևալ, պետքը չլինել, վեջը չլինել, բանի տեղ չդնել

высасывать из пальца – օղից վերցնել, իրենից հնարել, մատից հոտ քաշել
пальчики оближешь – մատներդ հետը կուտես, համը բերանդ կմնա, համից չես կշտանա [օրինակները՝ Ходжумян Б. 2007]:

Բերված օրինակները խոսում են ժամանակակից հայերենի դարձվածքային համակարգի հարստության մասին:

Ռուսերենի և հայերենի սոմատիկ դարձվածքների զուգադրական վերլուծությունը, որի ընթացքում զուգադրվող միավորների միջև բացահայտվում են որոշակի համապատասխանություններ և տարատեսակ անհամապատասխանություններ, հանգեցնում է այն եզրակացությանը, որ վերլուծվող միավորների բնույթի մասին ավելի ստույգ պատկերացում ստանալու համար թերևս հարկավոր է հայացքն ուղղել դեպի էթնոլեզվական գործոն, որն էլ հաճախ կանխորոշում է տարբեր լեզուների համարժեք լեզվամիավորների զարգացման տարբեր ուղիները: Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ միջմշակութային հաղորդակցման ընթացքում, որը ներառում է հաղորդակցման վերբալ և ոչ վերբալ ձևերի միասնությունը, տեղի է ունենում մշակութային փոխազդեցություն, որի արդյունքն է լինում տարբեր մշակութակիր ազգերի փոխընկալումը և համապատասխանաբար՝ նրանց լեզուների փոխհարստացումը:

БЕЛЛА ХОДЖУМЯН – *Взаимосвязь языка и национальной культуры (сравнительный анализ)*. – Статья посвящена сопоставительному анализу русских и армянских соматических фразеологизмов с целью выявления соответствий и расхождений между ними. Для исследования специально выбрана именно указанная тематическая группа фразеологизмов, поскольку она имеет очевидную антропоцентрическую направленность и по этой причине широко представлена во всех языках. Исследование полностью проведено в рамках лингвокультурологии с применением сопоставительного метода. Сделана попытка установить связь между невербальными языковыми символами и соответствующими фразеологизмами. На основе исследования конкретного материала делается вывод, что наблюдаемые несоответствия между анализируемыми единицами в двух языках в основном связаны с национальным своеобразием, с культурными традициями и национальным менталитетом носителей сопоставляемых языков.

Ключевые слова: *соматизм, соматический фразеологизм, вербальный язык, невербальный язык, соответствия, расхождения, символ, национальная специфика.*

BELLA KHOJUMYAN – *Relationships with Language and National Culture (comparative analysis)*. – The article is devoted to the comparative analysis of Russian and Armenian somatic phraseological units with the purpose of identifying the correspondences and differences between them. An attempt was made to establish a connection between them. An attempt was made to establish a connection between non-verbal language symbols and the corresponding phraseological units. The mentioned thematic group of phrases was specially chosen for the study, because it has an obvious human-centered orientation and for that reason is widely represented in all languages. The study was completely carried out under linguistic and cultural studies, applying the comparative method.

Based on the study of specific material, we come to the conclusion that the observed discrepancies between the analyzed units in the two languages are mainly associated with national identity, cultural traditions and the national mentality of the speakers of the compared languages.

Key words: *somatic word, somatic phraseological unit, verbal language, non-verbal language, correspondences, discrepancies, symbol, national specificity.*

Գրականության ցանկ

- Ղազարյան, Հ. (2012): Փոխաբերական վերախմաստավորումը մարմնի մասերի անվանումներով դարձվածքներում // Լրաբեր հասարակական գիտությունների, №1: (Ghazar'yan, H. (2012). *P'vokhaberakan veraimastavorumē marmni maseri anvanumnerew darzvats'k'nerum* // *Lraber hasarakakan gitut'yunneri*, №1).
- Օլյան, Ա. (2016): Բառապաշարի թեմատիկ դասակարգումն ու «մարմնի մասերի» իմաստային խումբը լեզվաբանական հետազոտության առարկա // Հայագիտական հանդես, №31 (1): (Olyan, A. (2016). *Barrapashari tematikan dasakargumēn u "marmni maseri" imastayin khumpē lezvabanakan hetazotut'yan ararka* // *Hayagitakan handes*, №31 (1)).
- Балли, Ш. (2001). Французская стилистика. М.: Эдиториал УРСС, 394 с. (Balli, Sh. (2001). *Frantsuzskaya stilistika*. М.: Editorial URSS, 394 s.).
- Маслова, В. А. (2001). Лингвокультурология. М.: Изд. Центр «Академия», 208 с. (Maslova, V. A. (2001). *Lingvokul'turologiya*. М.: Izd. Tsentr "Akademiya", 208 s.).
- Новый язык телодвижений (2007). М., 416 с. (Novyy yazyk telodvizheniy (2007). М., 416 s.).
- Русецкая, И. (2012). Концептуализация культурных стереотипов души и тело в русской соматической фразеологии (с привлечением литовских параллелей). М., 231 с. (Rusetskaya, I. (2012). *Kontseptualizatsiya kul'turnykh stereotipov dusha i telo v russkoy somaticheskoy frazeologii (s privlecheniem litovskikh paralleley)*. М., 231 s.).
- Сепир, Э. (1993). Избранные труды по языкознанию и культурологии. М.: Прогресс, 656 с. (Sepir, E. (1993). *Izbrannyye trudy po yazykoznaniiu i kul'turologii*. М.: Progress, 656 s.).
- Современный язык жестов (2007). Москва-Минск. (Sovremennyy yazyk zhestov (2007) Moskva–Minsk).
- Телия, В.Н. (1993). Культурно-национальные коннотации фразеологизмов // Славянское языкознание. М.: Наука, 308 с. (Teliya, V. N. (1993). *Kul'turno-natsional'nye konnotatsii frazeologizmov* // *Slavyanskoe yazykoznanie*. М.: Nauka, 308 s.).
- Телия, В. Н. (1996). Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты//Языки русской культуры. М., 281 с. (Teliya, V. N. (1996). *Russkaya frazeologiya. Semanticheskii, pragmaticheskii i lingvokul'turologicheskii aspekty* // *Yazyki russkoy kul'tury*. М., 281 s.).
- Тер-Минасова С. Г. (2008). Язык и межкультурная коммуникация. М.: Слово, 624 с. (Ter-Minasova S. G. (2008). *Yazyk i mezhkul'turnaya kommunikatsiya*. М.: Slovo, 624 s.).
- Բառարաններ**
- Բեդիրյան, Պ. Ս. (2011): Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան: Եր.: (Bediryan, P. S. (2011). *Hayeren darzvats'k'neri andratsak bacatrankan barraran*. Yer.).
- Ղազարյան, Հ. (2010): Մարմնի մասերի անվանումներով հայերեն-ռուսերեն-անգլերեն դարձվածքների բառարան: Եր.: (Ghazar'yan, H. (2010). *Marmni maseri anvanumnerew hayeren–ruseren–angleren darzvats'k'neri barraran*. Yer.).
- Սուքիասյան, Ա. Մ., Գալստյան, Ս. Ա. (1975): Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան: Եր.: (Sukiasyan, A. M. (1975). *Galstyan S. A. Hayots' lezu'i darzvats'abanakan barraran*. Yer.).
- Русско-армянский фразеологический словарь (1975). Под ред. Р. Л. Мелкумяна и П. М. Погосьяна. Ер.: ЕГУ. (Russko-armyanskiy frazeologicheskii slovar (1975). Pod red. R. L. Melkumyana i P. M. Pogosyana. Er.: EGU).
- Ходжумян, Б.С. (2007). Русско-армянский словарь-справочник соматических фразеологизмов. Ер., изд-во ЕГУ, 176 с. (Khodzhumyan, B. S. (2007). *Russko-armyanskiy slovar'-spravochnik somaticheskikh frazeologizmov*. Er., izd-vo EGU, 176 s.).

ԷԿՈԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՇԱՀ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ԱՂԻԼԽԱՆՅԱՆ , ԶԱՐԻԿ ԱՂԱԶՆՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հոդվածում անդրադարձ է կատարվում լեզվաբանության նոր ուղղության՝ էկոլեզվաբանության խնդիրներին: Լեզուն՝ իբրև ազգային գոյաբանական համակարգ, իբրև ազգային մտածողության բանաձև, պայմանավորված է ոչ միայն լեզվակիր անհատի լեզվամտածողությամբ և աշխարհայացքով, այլև լեզու-մարդ-միջավայր փոխհարաբերությամբ ու փոխազդեցություններով: Այդ բազմաբարդ շրջայում շրջակա միջավայրն իր անմիջական ազդեցությունն է թողնում մարդու խոսքային գործունեության վրա: Բնականաբար, եթե խոսվում է բնության էկոհամակարգի պահպանման մասին, պետք է ուշադրություն դարձնել նաև էկոհամակարգի կազմիչներից մեկի՝ մարդու բնածին ունակության՝ լեզվի մաքրությանը և պահպանությանը: Լեզվի էկոլոգիան նման է շրջակա միջավայրի էկոլոգիային՝ երկու դեպքում էլ իբրև շարժիչ ուժ ունենալով ներդաշնակության պահպանման, բարեշրջման օրենքների անխախտ գործառությունը:

21-րդ դարում անհրաժեշտություն է բարձրաձայնել լեզվամտածողության նոր տեսակի՝ **էկոլոգիական լեզվամտածողության** մասին, որը ենթադրում է լեզուն դիտարկել որպես անփոխարինելի բաղադրիչ **մարդու-հասարակության-բնության** միջև: Այս դեպքում լեզվի էկոլոգիան վերածվում է սոցիալական և բացասական (նեգատիվ) ազդեցություններից լեզվի պաշտպանության գործիքի: Էկոլեզվաբանությունն ուսումնասիրում է հենց լեզվի աղտոտման աղբյուրները, կնճռոտ խնդիրներին լուծումներ գտնելու ուղիները: Այն կոչված է տալու լեզվի զարգացման օբյեկտիվ պատկերը, լեզվակիր հասարակությանը զգուշացնելու լեզվին սպառնացող վտանգների, նրա աղտոտվածության մասին և այս կերպ խնամք ու

* **Անահիտ Աղիլխանյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

Анаит Адилханян – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ
Anahit Adilkhanyan – PhD in Philology, Associate Professor at YSU Chair of Armenian Language
Էլ. փոստ՝ adilkhanyanahit@ysu.am <https://orcid.org/0009-0006-0917-4586>

Զարիկ Աղաջանյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

Зарик Агаджанян – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ
Zarik Aghajanyan – PhD in Philology, Associate Professor at YSU Chair of Armenian Language
Էլ. փոստ՝ aghajanyanzarik@ysu.am <https://orcid.org/0009-0002-6573-3777>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 28.04.2025
Գրախոսվել է՝ 30.04.2025
Հաստատվել է՝ 02.06.2025
© The Author(s) 2025

հոգատարություն ցուցաբերելու գրական լեզվի ճակատագրի, մարդու և հասարակության խոսքային միջավայրի հանդեպ:

Բանալի բառեր – *էկոլեզվաբանություն, էկոլոգիական լեզվամտածողություն, մարդ, հասարակություն, բնություն, լեզվակիր անհատ, խոսքի և լեզվի էկոլոգիա, շարժիչ ուժ, ներդաշնակություն*

Լեզուն՝ իբրև ազգային գոյաբանական համակարգ, իբրև ազգային մտածողության բանաձև, պայմանավորված է ոչ միայն լեզվակիր անհատի լեզվամտածողությամբ և աշխարհայացքով, նրա գիտակրթական ներուժի ու քաղաքակրթվածության մակարդակով, բարոյահոգեբանական որակներով, խոսքիմշակութային արժեհամակարգով, այլև **լեզու-մարդ-միջավայր** փոխհարաբերություններով և փոխազդեցություններով: Այդ բազմաբարդ շղթայում շրջակա միջավայրն իր անմիջական ազդեցությունն է թողնում մարդու խոսքային գործունեության վրա: Դեռ 20-րդ դարասկզբին գերմանացի լեզվաբան Վայսգերբերը, սահմանելով լեզվի երեք օրենքները՝ **ա. լեզվական հանրության, բ. մայրենի լեզվի**, այն է՝ **անհատի լեզվի**, և **գ. լեզվով պայմանավորվող գոյի**, եզրակացրել է. «Լեզուն, resp. մայրենի լեզուն ոգի ստեղծող ուժ է, որ որոշիչ դեր է խաղում մարդու աշխարհըմբռնման մեջ, հնարավորություն է տալիս արտաքին իրականությունը ձևավոխելու և ենթարկելու ոգուն»¹:

Ընդհանուր գիտաբանության մեջ տարածված է այն կարծիքը, որ խոսելու կարողությունը (լեզուն), ինչպես տեսողությունն ու լսողությունը, մարդուն տրված են բնությունից: Բնականաբար, եթե խոսվում է բնության էկոմաքրության և էկոպահպանության մասին, ուրեմն վերջինս պետք է ներառեր և իր էկոմասնիկներից մեկի՝ մարդու բնական՝ բնածին ունակության՝ լեզվի մաքրության և պահպանության հարցերը: Անցյալ դարի 70-ական թվականներից լեզվաբանական գիտությունների համակարգը հարստացավ նոր գիտաճյուղով, որն անվանվեց **էկոլեզվաբանություն**: Իր էկոլոգիական և լեզվաբանական խնդիրների բազմաբարդ համաձուլվածքով այն նույնպես կառուցվում է մարդակենտրոն համակարգի շուրջը՝ նպատակաուղղված լեզվի և այդ լեզուն գործածողների միջավայրի փոխհարաբերության ուսումնասիրությանը:

Ծագումնաբանական հենքը **էկոլոգիա** գիտությունն է, որն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների, դրանց համախմբերի փոխազդեցությունները միմյանց և իրենց շրջապատող միջավայրերի միջև: Սկզբնական շրջանում առավելապես զբաղվելով շրջակա միջավայրի բնապահպանական խնդրահարույց հարցերով՝ հետագայում իմաստի ընդլայնմամբ սկսում է տարածվել բնական և անգամ հասարակական գիտությունների վրա այն պարզ տրամաբանությամբ, որ շրջակա (էկոլոգիական) միջավայրը ազդում է հասարակության և

¹ Մեջբերումն ըստ **Ջահուկյան, Գ. Բ.** Լեզվաբանության պատմություն, 2 հատորով, հ. 2, Եր., 2015, էջ 350:

անհատի կենսագործունեության, ներառյալ և լեզվական վարքագծի վրա: «Էկոլոգիա» գիտության ճյուղավորման արդյունքում (**սոցիալական էկոլոգիա, մարդու էկոլոգիա, անտառի էկոլոգիա, ջրային ռեսուրսների էկոլոգիա, լեռնային համակարգերի էկոլոգիա** և այլն) էկոգիտական համակարգում սաղմնավորվեց «լեզվի էկոլոգիա» գիտաճյուղը, որը հետագայում **հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության և լեզվափիլիսոփայության, հասարակագիտության, քաղաքագիտության** խաչավորման առանցքում ամրակայվեց «**էկոլոգիական լեզվաբանություն**» կամ «**էկոլեզվաբանություն**» տերմինակապակցությամբ: Էկոլոգիական և լեզվաէկոլոգիական հարցերով զբաղվող գիտնականները «**էկոլոգիա**» հասկացության բովանդակությունը ներկայացնելու համար ամենից առաջ մեջբերում են «խնամք», «անվտանգություն», «պահպանում», «պաշտպանություն», «առողջացում», «մաքրություն» հասկացությունները՝ կարևորելով այն հարցերը, թե ի՞նչ ուղղություններով են առաջադրվում պաշտպանության և պահպանության հարցերը, ի՞նչը կամ ինչն են ազդում լեզվի վրա, կամ՝ որտե՞ղ են դժվարությունները, ի՞նչ լուծումներ գտնել և ինչպե՞ս: Այն, որպես մարդու և հասարակության բնակավայրի լեզվամիջավայրն ուսումնասիրող նոր գիտաճյուղ, որդեգրեց էկոլոգիական օրենքներ, սկզբունքներ ու օրինաչափություններ, կանոններ, որոնք հատկանշվեցին երկգործառությամբ՝ **էկոլոգիական և լեզվաբանական**, ուսումնասիրեց նաև լեզվի դերը շրջակա միջավայրի և բնապահպանական խնդիրների (պրոբլեմների) հնարավոր լուծումներ գտնելու գործում:

Լեզվի էկոլոգիան նման է շրջակա միջավայրի էկոլոգիային՝ երկու դեպքում էլ իբրև շարժիչ ուժ ունենալով **ներդաշնակության** կամ **հավասարակշռության պահպանման, բարեշրջման** օրենքների անխախտ գործառությունը: Ինչպես բնության մեջ ամեն ինչ փոխվում է ժամանակի հետ, այնպես էլ լեզվում են կատարվում նույնատիպ փոփոխություններ, որոնք պայմանավորված են արտաքին միջավայրի ազդեցությամբ, բնական և բնափոխական, հասարակական, տնտեսական, քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններով: Հետևաբար՝ աններդաշնակությունն ու հետընթացը, աղտոտումն ու խախտումը, շեղումն ու եղծումը էկոլոգիական ճգնաժամի (անգամ աղետի) պատճառ են դառնում: Այս խնդրին անդրադարձել են նաև ռուս լեզվաբանները՝ նշելով, որ «...բնության աղտոտման և լեզվի աղտոտման, բնության պաշտպանության ու լեզվի պաշտպանության, բնության պաշարների ու լեզվական պաշարների, կենդանի բնության ու կենդանի լեզվի, բնապահպանական գիտակցության ու լեզվապահպանման գիտակցության, խոսքի մշակույթի էկոլոգիայի ու բնության էկոլոգիայի, բնության հավասարակշռության խախտման ու լեզվական համակարգի հավասարակշռության խախտման, բնության վրա այլ գործոններ

րի ազդեցության և լեզվի մեջ ոճական խախտման և այլ գործոնների ազդեցության պատճառներով է խախտվել ներդաշնակությունը Խոսող Մարդու և Բնության փոխազդեցությունների միջև»²:

Ըստ օտարալեզու աղբյուրների՝ «Էկոլոգիա» տերմինը լեզվաբանություն է ներմուծել **Ջոն Փրիմոն**, առավել տարածվել է ամերիկյան հանրալեզվաբանության (սոցիոլինգվիստիկայի) հանրահայտ ներկայացուցիչ **Էյնար Հատուգենի** «Լեզվի էկոլոգիա» գրքի շնորհիվ (1972 թ.): Ըստ նրա՝ էկոլոգիայի առարկան տվյալ լեզվի վրա հոգեբանական ու սոցիալական իրադրությունների թողած ազդեցությունների և հետևանքների ուսումնասիրությունն է: Նա առաջինն էր, որ ձևակերպեց լեզվի էկոլոգիայի պրոբլեմները՝ որպես առանձին ուղղության, և գիտականորեն հաստատեց, որ այն ձևավորվել է **էկոլոգիա** գիտության դասական հասկացությունների փոխաբերացման ճանապարհով: Դրանցից մեկն այն է, որ էկոլոգիական միջավայրում կենսաբանական տիպերը ծնվում են, աճում են, փոփոխվում, ապրում ու մահանում են այլ տիպերի և բնական միջավայրի հետ ունեցած փոխազդեցությունների արդյունքում: Լեզուներն էլ նման են այդ կենսաբանական էակներին. ծնվում են, աճում, զարգանում և մահանում են լեզվամիջավայրի ազդեցությամբ և այլ լեզուների հետ ունեցած փոխազդեցություններում, ուստի և լեզվի էկոլոգիան (էկոլեզվաբանությունը) պետք է լուծի այս խնդիրները, առաջարկի լեզուների մահը կանխարգելող լուծումներ:

Իսկ «լեզվաբանական էկոլոգիա» տերմինակապակցությունը կիրառվել է **Զարլգ և Ֆլորենս Վյոգլինների** կողմից, ովքեր առաջարկում էին էկոլեզվաբանական քննությունն սկսել ոչ կոնկրետ լեզվից, այլ որոշակի տարածքում գործառվող բոլոր լեզուների փոխազդեցական հիմնահարցերից: Նրանք գրում են. «Լեզվի էկոլոգիայի ուսումնասիրությունը պետք է սկսել ոչ թե կոնկրետ լեզվից, այլ որոշակի տարածքից, ոչ թե ընտրովի ուշադրություն դարձնել մի քանի լեզուների, այլ ուշադրությունը կենտրոնացնել այդ տարածքում ներկայացված բոլոր լեզուներին»³: Այնուհետև նշվում է, որ «էկոլեզվաբանություն» եզրույթը շրջանառության մեջ է դրել ֆրանսիացի **Կլոդ Ագեկինը**:

Ավստրիացի լեզվաբան **Ալվին Ֆիլլը** սահմանել է էկոլեզվաբանության տարբեր ենթաճյուղերն անվանող տերմինները՝

էկոլեզվաբանություն – ընդհանուր տերմին բոլոր ոլորտների ուսումնասիրության համար, որով միավորվում են էկոլոգիան և լեզվաբանությունը,

լեզվի էկոլոգիա – ուսումնասիրում է լեզուների միջև փոխհարաբերությունները՝ լեզվաբանական բազմազանությունը պահպանելու նպատակով,

² **Шляхов, В. И., Никонов, А. Л.** Эколингвистика и проблема экологии языка в российском языковом пространстве // Пространство и Время. 2011. № 4 (6). С. 140.

³ **Нурушева, Д. А.** Эколингвистика как раздел языкознания // Фундаментальные исследования. 2014. № 5 (часть 4). С. 890-893.

Էկոլոգիական լեզվաբանություն – զբաղվում է լեզվաբանության մեջ էկոլոգիական տերմինների և սկզբունքների ներմուծմամբ (օրինակ՝ **Էկոհամակարգեր** հասկացությունը),

լեզվաբանական (լեզվական) էկոլոգիա – ուսումնասիրում է լեզուների միջև փոխազդեցությունների և էկոլոգիական հարցերը⁴:

Հետագա զարգացման ընթացքում առանձնացվեցին էկոլոգիական լեզվաբանության տարբեր ենթաճյուղեր՝ **լեզվաբանության էկոլոգիա**, **խոսքի էկոլոգիա**, **լեզվի էկոլոգիա**, **լեզվական միջավայրի էկոլոգիա**, **բառի էկոլոգիա**, **նախադասության էկոլոգիա**, **ժուռնալիստիկական էկոլոգիա**, **դիվանագիտական էկոլոգիա** և այլն:

21-րդ դարում լեզվի մշակույթը ներառված է մշակույթի էկոլոգիայի համատեքստում՝ որպես նրա կարևոր բաղադրիչ: Այսօր արդեն անհրաժեշտություն է բարձրաձայնել լեզվամտածողության նոր տեսակի՝ **Էկոլոգիական լեզվամտածողության** կամ **լեզվամտածողության էկոլոգիայի** մասին («Էկոլոգիական լեզվամտածողություն» տերմինակապակցությունը ռուս լեզվաբաններինն է)⁵: Այսպես, օգնելով գիտակցել տարբեր հարցերի շուրջ ծագած հակասությունների սրացման մեխանիզմները՝ էկոլեզվաբանությունը փորձում է նպաստել տարբեր երկրների, նաև մի երկրի ներսում հասարակության և սոցիալական տարբեր համախմբերի պատկանող մարդկանց խաղաղ գոյակցությանը: Նշանակում է՝ էկոլեզվաբանությունը վերածվում է մարդկանց միջև հարաբերությունների, դիվանագիտական հարցերի կարգավորման հզոր գործիքի. քաղաքակիրթ անհատի իմաստուն բառն ու բանը (խոսք) կարողունակ է շատ բաներ փոխել-փոփոխելու ի շահ մարդկության բարօրության: Ավելին, լեզուն հանդես է գալիս իբրև միջմշակութային և ներմշակութային երկխոսության գործիք, իբրև շղթայակցող օղակ հասարակական, մշակութային և բնության (բնական) էկոհամակարգերի, դրանց կազմիչ էկոմասնիկների միջև:

²⁴ Տե՛ս «Ի. Սադաթեյան. Ես հատուկ զգուշացնում եմ այս իշխանության հենարան օլիգարխներին», Yerevan.today, 15.05.2022, https://yerevan.today/all/society/104313/es-hatouk-zgoushacnoum-em-ays-ishxanoutyan-henaran-oligarxnerin%E2%80%A4-ishxan-saghatelayan?utm_source=chatgpt.com

²⁵ Տե՛ս «Դերզյան. Փաշինյանը ՀՀ-ն թուլացրել է, ՀՀ գործընկերային հարաբերությունները փչացրել է, որ ասի՝ մենակ ես մնացել, մեզ օգնող չկա, եկեք ամեն ինչ հանձնենք», 168.am, 19.03.2024, <https://168.am/2024/03/19/2013079.html>

²⁶ Տե՛ս «Մովսես Հակոբյանի պատասխանը Սասուն Միքայելյանին», hrarak.am, 18.02.2024, https://hrarak.am/post/33639d349d007b9f819be3619192e651?utm_source=chatgpt.com

²⁷ Տե՛ս «Անորակ զենքը գնել են ոչ թե նախկինների, այլ Նիկոլ Փաշինյանի ժամանակ», hayeli.am, 01.10.2021, https://hayeli.am/?l=am&p=651073&utm_source=chatgpt.com

Արցախյան հիմնահարցի բանակցային գործընթացի ձախողման տիրույթում՝

• *Հակաիշխանական սեզմենտի նարատիվները.* վարչապետի՝ «Ամեն ինչ սեփական զրոյական կետից սկսելու» թեզը տարավ բանակցային փակուղի, «Արցախը Հայաստան է և վերջ» ուղերձով, տավուշյան սահմանային բախումներում տակտիկական հաղթանակի ուռճացմամբ Ադրբեջանին ռազմական գործողությունների սադրելը:

• *Իշխանական սեզմենտի նարատիվները.* հրադադարի հաստատումից՝ 1994 թ. ի վեր բանակցային գործընթացը նախկին բոլոր իշխանությունների կողմից Արցախը Ադրբեջանին վերադարձնելու տրամաբանությամբ է տարվել²⁸:

Հանրության կարծիքը ճակատագրապաշտական վախերով ուղղորդելու տիրույթում՝

• *Հակաիշխանական սեզմենտի նարատիվները.* «Եթե այս իշխանությունը մնա, Հայաստանը չի լինի», կամ՝ «Կառավարությունը Հայաստանի տարածքները հանձնում է Ադրբեջանին»²⁹, կամ՝ «Նիկոլ Փաշինյանը հանձնել է Արցախը, այժմ թրքահպատակ է ուզում դարձնել Հայաստանը»³⁰:

• *Իշխանական սեզմենտի նարատիվները.* «Եթե նախկին կոռումպացված թալանչիները վերադառնան իշխանության, կկորցնենք մեր անկախությունը»³¹, կամ՝ «Ընդդիմությունը դավադրաբար Հայաստանը փորձում է վերածել Ռուսաստանի «գուբերնիայի»³²:

Հատկանշականն այն է, որ նշված սեզմենտների սոցցանցային «հրապարակախոսների» կողմից այս իրարամերժ թեզերի առաջնության պայմաններում հանրությունը շատ դեպքերում աննկատ է թողնում իրողությունների առավել խորքային ու համակողմանի վերլուծությունները:

Բացի վերոնշյալից, թվային բովանդակության ֆրագմենտացումը խթանում են նաև առանձին մեդիահարթակների, ինչպես նաև փնտրման համակարգերի ալգորիթմները:

²⁸ Տե՛ս «Նիկոլ Փաշինյան. Բանակցային գործընթացը մեկնարկի պահից եղել է Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմ վերադարձնելու մասին», armenpress.am, 23.12.2024, <https://armenpress.am/hy/article/1208110>

²⁹ Տե՛ս «Ա. Աղաբաբյան. Կապիտուլյանտն Ադրբեջանին է հանձնում մի շարք տարածքներ Տավուշի և Արարատի (Տիգրանաշեն) մարզերից», 168.am, 25.05.2021, https://168.am/2021/05/25/1518958.html?utm_source=chatgpt.com

³⁰ Տե՛ս «Մաղաթեյանը նշեց՝ Փաշինյանը ունի պայմանավորվածություններ ու իշխանության մնալով երկիրը կամ պատերազմի է տանելու, կամ հայրենագրվման», infocom.am, 14.05.2022, <https://infocom.am/hy/article/82234>

³¹ Տե՛ս «Վիզեն Խաչատրյան. Թալանչիները ոտքի են կանգնել. օրինական դաշտում լուրջ անելիքներ ունենք», factor.am, 04.05.2022, <https://factor.am/507020.html>

³² Տե՛ս «Ժ. Ոսկանյան, Քոչարյանն իրեն պատկերացնում է Ռուսաստանի գուբերնիայի ղեկավար, ոչ ՀՀ 2-րդ նախագահ», 1in.am, 07.04.2021, <https://www.1in.am/2927618.html>

Սոցիալական ցանցերի ալգորիթմները, համացանցային փնտրման կառուցվածքների կիրառման արդյունքում որոշակիելով օգտատերերի նախասիրությունները, նրանց առաջարկում են դրանցից բխող բովանդակությունների սահմանափակ շրջանակներ, սահմանում առաջնահերթություններ: Տեղեկության սպառողներն իրենք են հաճախ իրենց տեղորոշում որոշակի սոցիալական կամ քաղաքական սեգմենտներում՝ ընտրելով այն տեղեկատվական հոսքերը, որոնք համապատասխանում են իրենց ճաշակին կամ համոզմունքներին: Ըստ «Deloitte Insights» ամսագրում հրապարակված հետազոտության՝ մեդիակոնտենտի սպառողների 77%-ը հետևում է կոնտենտ ստեղծողներին՝ ելնելով ընդհանուր հետաքրքրությունից կամ հոբբիից կամ ինչ-որ նոր բան սովորելու ցանկությունից, ինչը օգնում է ստեղծողներին՝ կապիտալացնելու այդ հետաքրքրությունների վրա հիմնված համայնքները³³: Այսինքն՝ ալգորիթմների միջոցով իրականացվում է տեղեկատվության աղբյուրների և բուն բովանդակության գտում:

Խիստ տարածված է, մասնավորապես, իրենց ցանցային «ընկերների» շարքից քաղաքական կամ քաղաքակրթական այլ համոզմունքներ կրող և «լուծյան պարույրին» չենթարկվող անհատների հեռացումը: Որպես կանոն՝ դա տեղի է ունենում քաղաքական նկատառումներով՝ «իշխանականների» և «հակաիշխանականների», «կառավարողների» և ընդդիմության, «կեղծ ընդդիմության» և «արմատական ընդդիմության», «հայրենասերների» և «ղավաճանների», «ռուսամետների» և «արևմտամետների» հակընդդեմ, իրարամերժ կոնցեպտներով:

Այս երևույթի հիման վրա ամերիկացի հետազոտող, մեդիաակտիվիստ Էլի Փերիզերը զարգացրել է իր հայտնի «ֆիլտրային պոպուլյար» տեսությունը: Հայտնի հետազոտողը գտնում է, որ ալգորիթմների կիրառմամբ տեղեկատվության ընտրողականությունը նպաստում է հասարակական ոլորտի մասնատմանը, և ընդհանուր աշխարհի փոխարեն մարդն ստանում է բազմաթիվ իրականություններ: Ըստ Փերիզերի՝ «ֆիլտրային փուչիկը» կամ պոպուլյար չի հանդուրժում հակասական կարծիքներ և չի տալիս ոչ մի հնարավորություն հանդիպելու այլընտրանքային փաստերին: Մա ստեղծում է մասնատված տեղեկատվական համակարգ, որն արտացոլում և խորացնում է սոցիալական բևեռացումը³⁴:

Բացի այդ, տեղեկատվության հեղինակները՝ լինեն զանգվածային տեղեկատվական միջոցներ, ֆիզիկական անձինք կամ կազմակերպություններ,

³³ Sté u **Seidenschwarz Co., Matheson B.** Creator Economy in 3D: The platform's place in a shifting media landscape. Consumers and social media, Deloitte, <https://www2.deloitte.com/us/en/pages/chief-marketing-officer/articles/consumers-and-social-media-preferences.html>

³⁴ Sté u **Pariser E.** *The Filter Bubble: What the Internet Is Hiding from You*. New York: Penguin Press, 2011:

ձգտում են իրենց նախորդված լսարաններին հասու դառնալ կարճ գրառումներով, հեշթեգներով, ռիվերով: Այս հայեցակերպը կառուցված է լսարանին տեղեկությո, էմոցիա, զգացողություն, սակայն ոչ խորքային միտք հասցնելու, քննադատական հայացք զարգացնելու տրամաբանությամբ:

Ֆրագմենտացված տեղեկատվության միջոցով առավել դյուրին է դառնում շահառու հանրային շրջանակի մանիպուլյացիան: 2020 թվականին, COVID-19-ի համավարակի ընթացքում, օրինակ, ինչպես վարակի տարածման, այնպես էլ պատվաստանյութերի և պատվաստման գործընթացի վտանգավորության վերաբերյալ մանիպուլյատիվ միջերը ձևավորվել են առավելապես սոցիալական մեդիայում տարածվող 15-30 վայրկյանանոց տեսանյութերի ազդեցությամբ: Ապակոդմոնոքոչող այդ բովանդակության ահռելի ծավալները էականորեն բարդացրել են փաստերն ստուգելու և վստահելի տեղեկատվությունը մաքրագրելու լսարանի գործը:

Մեզմենտավորված լսարանների կողմից մանիպուլյատիվ նպատակներով սոցիալական հարթակների կիրառման դասական օրինակ էր 2017 թ. Մյանմայի զինված ուժերի կողմից երկրի արևմտյան մասում բնակվող ռոհինջա էթնիկ փոքրամասնության նկատմամբ իրականացված զանգվածային բռնություններին, սպանություններին ու բնակավայրերի ոչնչացման գործողություններին (որոնք ՄԱԿ-ը ճանաչել է որպես ցեղասպանական կամ էթնիկ զտման գործողություններ) նախորդած՝ ռոհինջաների դեմ հսկայածավալ ուղղորդված ատելության խոսքի գեներացումը սոցիալական ցանցերում և հատկապես Facebook-ի համապատասխան խմբերում³⁵:

Հրապարակային խոսույթի ցանցային հեղինակությունները կամ «ցանցային հրապարակախոսները» սեզմենտավորված լսարանների հետ ձևավորում են լոկալ հաղորդակցային հարթակներ և վերածվում այդ հարթակների բանախոսների: Հայկական մեդիատարածքում նման օրինակներից կարելի է համարել AntiFake ռեսուրսի կողմից թողարկվող երկու հեղինակ-բանախոսների՝ Վազգեն Սաղաթեյանի և Նարեկ Սամսոնյանի վարած «Imnemnimi» փողքաստը³⁶, «Լուսավոր Հայաստան» կուսակցության ղեկավար Էդմոն Մարությանի վարած «Platform» փողքաստը³⁷ կամ Ռոման Բաղդասարյանի ֆեյսբուքյան բլոգը³⁸:

Այս եղանակով բովանդակություն ստեղծողները, որոնք կարող են դիտվել որպես հրապարակախոսներ, իրենց ձևավորած լոկալ հանրույթներով սկսում

³⁵ Տե՛ս «Why Facebook is losing the war on hate speech in Myanmar», reuters.com, 15.08.2015, <https://www.reuters.com/investigates/special-report/myanmar-facebook-hate/>

³⁶ Տե՛ս «Imnemnimi» փողքաստ, յութուբյան ալիք,

https://www.youtube.com/playlist?list=PLDXUQCigq_napon2LqYFYnEpdwXRil55r

³⁷ Տե՛ս «Պլատֆորմ. Edmon Marukyan podcast», յութուբյան ալիք,

<https://www.youtube.com/playlist?list=PL6fVyQcTlpEAQjwUUDNG7F49r6icYlQ>

³⁸ Տե՛ս R. Baghdasaryan, ֆեյսբուքյան էջ,

<https://www.facebook.com/roman.bagdasaryan>

են միմյանց հանդեպ դիրքավորվել որպես «յուրայիններ» և «օտարներ», և ոչ յուրային սեգմենտի կողմից մյուսն արժանանում է անվստահության կամ անհանդուրժողականության:

Որոշ դեպքերում առցանց տեղեկատվական-հաղորդակցային լանդշաֆտում «ցանցային հրապարակախոսները» իրենց լսարաններին ավելի հասու դառնալու, լսարանը չկորցնելու, հակառակը՝ դրա շրջանակն ընդլայնելու նպատակով իրենց բովանդակությունը ձևավորում ու ձևակերպում են առօրյա-կենցաղային լեզվառճական կոդերով, ինչի հետևանքով ցանցային խոսույթում սկսում են գերակշռել կենցաղաբանությունը, ժարգոնն ու հայեցողականությունը: Առանձին կոնտենտ ձևավորողների համար դա դառնում է ինքնարտահայտման և իմիջակերտման, լսարանի վրա ներգործության գործնականում միակ միջոցը (Վարդան Ղուկասյան³⁹, Մարինա Պողոսյան⁴⁰):

Եզրակացություններ

Լինելով հանրային դիսկուրսի ձևավորման կարևորագույն միջոց՝ նոր մեդիայի և թվային տեխնոլոգիաների դարաշրջանում հրապարակախոսությունը ենթարկվում է էական փոխակերպումների: Այս առումով ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգել հետևյալ հիմնական եզրակացություններին:

- Ավանդական մեդիայի պայմաններում հրապարակախոսությունը հանդես է եկել որպես համամարդկային, ազգային և հասարակական արժեքների, բարոյաթիկական սկզբունքների և քաղաքական ուղենիշների ձևավորման միջոց՝ ներգրավելով ստեղծագործական ունակություններով և անհատական ոճով առանձնացող մտավորականներին:

- Նոր մեդիայի պայմաններում հրապարակախոսությունը ժողովրդականացվում է՝ դառնալով ավելի զանգվածային կիրառման, լայն հասանելիության միջոց, միաժամանակ բխվելով բովանդակության պարզեցման, ընդհուպ պարզունակեցման մարտահրավերին: Մասնավորապես՝ նոր մեդիայի առանձնահատկությունները (բովանդակության վիզուալացում, սոցիալական ցանցերի ազդեցություն և տեղեկատվության ֆրագմենտացում), հանգեցնում են վերլուծությունների խորքայնության նվազման, լսարանի բևեռացման, ինչպես նաև, պայմանավորված սոցիալական ցանցերի ալգորիթմներով, «ֆիլտրային պղպջակների» (filter bubbles) ազդեցության մեծացման:

- Որպես հետևանք՝ տեղեկատվության ֆրագմենտացումը և լսարանի սեգմենտավորումը՝

- *բթացնում են կոնտենտ սպառողի՝ տեղեկատվության վերլուծության, օբյեկտիվ իրականությունը բացահայտելու և ճանաչելու կարողությունը,*

³⁹ Տե՛ս «Vilaj Gamer» յությւնայն ալիք, որ տարածում է բլոգեր Վարդան Ղուկասյանի վիդեոբովանդակությունը, <https://www.youtube.com/@VijayGamer-e4i>

⁴⁰ Տե՛ս Հակակոռուպցիոն բլոգ/Anticorruption Blog, ֆեյսբուքյան էջ, <https://www.facebook.com/anticorruptionblog>

- հանգեցնում են հասարակական կարծիքի բնեռացման՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպառող սեգմենտավորված հանրությունները, հիմնականում օգտվելով տեղեկատվության սեփական աղբյուրներից և համախոհ հեղինակների հրապարակագրական մտքից, բոլոր այլընտրանքային փաստարկներն ու հակափաստարկներն ընկալում են որպես այլ սեգմենտների կողմից իրենց գիտակցության վրա ներգործելու, հետևաբար և մերժելի միջոցներ ու մեթոդներ,

- որակագրկում են հանրային դիսկուրսի մշակույթը և խթանում հանրային իրական օրակարգերի փոխարեն արհեստական և իրարամերժ օրակարգերի ձևավորումը,

- խորացնում են անվստահությունը համացանցում շրջանառվող տեղեկատվության, այդ տեղեկատվությունը շրջանառող սուբյեկտների, այդ թվում նաև պետական, քաղաքական, հասարակական ինստիտուտների, սոցիալական տարբեր շերտերի նկատմամբ՝ հանգեցնելով հանրային վստահության համընդհանուր և քառտիկ ճգնաժամի,

- հանրային ինստիտուտներ-հանրություն, ինչպես նաև ներհասարակական հաղորդակցության մեջ խորացնում են փոխադարձ անհանդուրժողականությունը, մերժողականությունը, ինչը հասարակությանը գրկում է ընդհանուր իդեալներ և նպատակներ, բարոյական սկզբունքներ առաջադրելու, մարտահրավերների դեմ մոբիլիզացվելու և հավաքական դիմադրողականության ռեսուրսից:

• Փոխվել են մտաստեղծագործականության ձևաչափերը. ավանդական մեդիայի հրապարակախոսական ժանրերը կորցնում են իրենց տեղը՝ փոխարինվելով ավելի դինամիկ, փորձառության և պատումների վրա խարսխված ժանրային նոր ձևաչափերով: Հրապարակախոսությունն իր խորությունն ու ազդեցության ուժը չկորցնելու համար պարտադրված է ենթարկվել այս ակտիվ վերափոխումներին՝ պահպանելով իր էթիկաարժեքային բովանդակությունն ու սոցիալական պատասխանատվությունը:

• Վերոնշյալից հետևում է, որ նորարարական ձևաչափերի նպատակային և արհեստավարժ կիրառումը, թվային տեղեկատվահաղորդակցային միջավայրում ինտելեկտուալ, ինքնարտահայտման սեփական ոճն ու ձեռագիրն ունեցող անհատականությունների և նրանց կողմից առաջարկվող բովանդակության քանակական ավելացումը կարող են վերականգնել նոր մեդիայում հանրային դիսկուրսի որակը և հասարակական մտքի զարգացման առումով ամրապնդել հրապարակախոսության մրցակցային առավելությունները:

ГОР АБРААМЯН – Преобразования публицистики в среде новых медиа и цифровой коммуникации. – Статья исследует трансформацию публицистики как уникального вида творческой деятельности в контексте новых медиа и цифровой коммуникации на фоне исторической функциональной роли традиционной медиапрактики. В работе обосновывается, что технологическое развитие новых медиа кардинально изменило формы и

методы коммуникации, повлияв на механизмы формирования общественного дискурса и воздействия на общественное мнение.

Анализируется, как социальные сети и цифровые технологии влияют на общественную и социальную роль публицистики, с акцентом на такие явления, как дегуманизация медиа, сегментация аудитории, фрагментация контента и кризис авторитетов в условиях цифровой коммуникации. Также обсуждаются как возможности, предоставляемые новыми медиа для модернизации публицистики, так и основные вызовы, стоящие на этом пути, предлагая решения для сохранения этических и ценностно ориентированного содержания и значения публицистики в цифровой среде.

Ключевые слова: публицистика, новые медиа, цифровая коммуникация, дегуманизация медиа, фрагментация контента, сегментирование аудитории, кризис авторства, трансформация медиа, алгоритм социальных сетей.

GOR ABRAHAMYAN – *Transformations of Publicism in the New Media and Digital Communication Environment*. – The article explores the transformations of journalism as a unique form of creative activity in the context of new media and digital communication, against the background of the historical functional role of traditional media practice. It argues that the technological advancements of new media have fundamentally altered the forms and methods of communication, impacting the mechanisms of shaping public discourse and influencing public opinion.

The article analyzes how social media and digital technologies affect the social and public role of journalism, focusing on phenomena such as the dehumanization of media, audience segmentation, content fragmentation, and the crisis of authority in the digital communication environment. It discusses both the opportunities provided by new media for modernizing journalism and the challenges encountered along this path, offering solutions to preserve the ethical and value-based content and meaning of journalism in the digital environment.

Key words: *Publicism, New Media, Digital Communication, Dehumanization of Media, Content Fragmentation, Audience Segmentation, Crisis of Authorship, Media Transformation, Social Media Algorithm.*

Գրականության ցանկ

- Անանյան Գ. (2005): Հայ հին և միջնադարյան հրապարակախոսություն, Երևան: (Ananyan, G. (2005). Hay hin yev mijinadaryan hlurakaghokhutyun, Yerevan).
- Դավթյան Մ. Խ., Մանուչարյան Հ. Գ. (2015): Մովսես Բաղրամյան. Հայ քաղաքական հրապարակախոսության սկզբնավորումը, Եր., ԵՊՀ հրատ.: (Davtyan, M. Kh., Manucharyan, H. G. (2015). Movses Baghranyan. Hay kaghakakan hlurakaghokhutyun uzhbatsnavorum, Yer., Yerevan State University Press).
- Осипова Е.А. (2022). Публицистика: ее сущность и роль в обществе. Вопросы журналистики, педагогики и языкознания. Белгород, 41(2). (Osipova, E.A. (2022). «Publitsistika: yey sushchnost' i rol' v obshchestve», Voprosy zhurnalistiki, pedagogiki i yazykovedeniya, Belgorod, 41(2)).
- Прохоров Е.П. (1973). Публицист и действительность. М. (Prokhorov, E.P. (1973). Publitsist i deystvitel'nost', M.).
- Черепахов М. С. (1973). Проблемы теории публицистики. М. (Cherepakhov, M. S. (1973). Problemy teorii publitsistiki, M.).
- Ученова В.В. (1979). Публицистика и политика. М.: Политиздат. (Uchenova, V. V. (1979). Publitsistika i politika», 2nd group, M., Politizdat).

- Castells M. (2012). Networks of outrage and hope - social movements in the Internet age», Polity Press, Cambridge.
- Jenkins H. (2006). *Convergence Culture: Where Old and New Media Collide*, New York, New York University Press.
- Chomsky N. (2002). Media Control The Spectacular Achievements of Propaganda, New York, Seven stories press, 2nd edition.
- Kroychik L. E. (2015). Dialogue resources of journalism. Voprosy teorii i praktiki zhurnalistiki = Theoretical and Practical Issues of Journalism, vol. 4, no. 2, pp. 139–148.
- Naisbitt J. *Megatrends* (1982). *Ten New Directions Transforming Our Lives*. New York, Warner Books.
- Pariser Eli (2011). *The Filter Bubble: What the Internet Is Hiding from You*. Penguin Press, New York.
- Tertychnyy A.A. (2018). Publizism in Modern Russian media: reflection and practice. RUDN Journal of Studies in Literature and Journalism, 23 (1).

Համացանցային կայքեր / Websites

- https://www.osce.org/files/f/documents/0/c/490436_0.pdf [հասանելի՝ 09.01.2025]
- <https://www2.deloitte.com/us/en/pages/chief-marketing-officer/articles/consumers-and-social-media-preferences.html> [հասանելի՝ 09.01.2025]
- <https://www.pewresearch.org/journalism/fact-sheet/social-media-and-news-fact-sheet/> [հասանելի՝ 09.01.2025]

Սոցիալական ցանցեր / Social Media

- <https://www.facebook.com/roman.bagdasaryan.184> [հասանելի՝ 09.01.2025]
- <https://www.facebook.com/anticorruptionblog> [հասանելի՝ 09.01.2025]
- https://www.youtube.com/playlist?list=PLmwsBqROifgTgsYl3Dcamy_CSp8kWqHL1 [հասանելի՝ 09.01.2025]
- https://www.youtube.com/playlist?list=PLbUvoekPxGfoDCLBZ2b-rEBqplXfu6i_ [հասանելի՝ 09.01.2025]
- <https://www.youtube.com/@VijayGamer-e4> [հասանելի՝ 09.01.2025]
- https://www.youtube.com/playlist?list=PLDXUQCigq_napon2LqYFYnEpdwXRil55r [հասանելի՝ 09.01.2025]
- <https://www.youtube.com/@gnelsargsyan1979/videos> [հասանելի՝ 09.01.2025]
- <https://www.youtube.com/@HaykManasyan1/videos> [հասանելի՝ 09.01.2025]
- <https://www.facebook.com/Davit.V.Grigoryan> [հասանելի՝ 09.01.2025]
- rearrange with Narek Amirkhanyan - YouTube [հասանելի՝ 09.01.2025]
- https://www.youtube.com/playlist?list=PL6fVyQcTlpEAQjJwUUDNG7F49r6icYlQ_ [հասանելի՝ 09.01.2025]

Հրատվամիջոցներ / Mass Media

- «Զարթոնք» օրաթերթ, 1988, № 182 - https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Zartonq-1937/1988/182_ocr.pdf [հասանելի՝ 09.01.2025]
- aravot.am - <https://www.aravot.am/2023/06/23/1350397/> [հասանելի՝ 09.01.2025]
- hraparak.am - <https://hraparak.am/post/27812c28ae446afb450049da6bbac448> [հասանելի՝ 09.01.2025]
- hayeli.am - <https://hayeli.am/?p=779450&l=am> [հասանելի՝ 09.01.2025]
- https://hayeli.am/?l=am&p=651073&utm_source=chatgpt.com [հասանելի՝ 09.01.2025]

pastinfo.am - <https://www.pastinfo.am/hy/news/2021/02/01/a7r0qq6o/1139639> [հասանելի՝ 09.01.2025]

verelq.am - <https://verelq.am/hy/experts/show/95024> [հասանելի՝ 09.01.2025]

yerevan.today - https://yerevan.today/all/society/104313/es-hatouk-zgoushacnoum-em-ays-ishxanoutyan-henaran-oligarxnerin%E2%80%A4-ishxan-saghatelian?utm_source=chatgpt.com [հասանելի՝ 09.01.2025]

168.am - <https://168.am/2024/03/19/2013079.html> [հասանելի՝ 09.01.2025]

https://168.am/2021/05/25/1518958.html?utm_source=chatgpt.com [հասանելի՝ 09.01.2025]

infocom.am - <https://infocom.am/hy/article/82234> [հասանելի՝ 09.01.2025]

factor.am - <https://factor.am/507020.html> [հասանելի՝ 09.01.2025]

1in.am - <https://www.1in.am/2927618.html> [հասանելի՝ 09.01.2025]

Արմենպրես գործակալություն - <https://armenpress.am/hy/article/1208110> [հասանելի՝ 09.01.2025]

«Reuters» գործակալություն - <https://www.reuters.com/investigates/special-report/myanmar-facebook-hate/> [հասանելի՝ 09.01.2025]

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ ՎԱՆՈՒ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ* 

Երևանի պետական համալսարան

Հոդվածում համակարգված կերպով վերլուծվում է Վանո Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ ղարաբաղյան հակամարտության թեման: Սիրադեղյանի համար Ղարաբաղյան հարցը եղել է իր հրապարակախոսության մեկնակետ և քաղաքական կենսագրության առանցք: Հոդվածում ցույց է տրվում, թե ինչպես է Սիրադեղյանը մոտեցել խնդրին՝ զուգահեռ դիտարկելով դրա պատմական, քաղաքական, աշխարհաքաղաքական և ներքաղաքական հարթությունները: Վերլուծվում են Սիրադեղյանի հրապարակախոսական հոդվածներն ու ելույթները, որոնցում նա քննադատում է թե՛ Հայաստանի իշխանությունների ռազմավարական թերացումները, թե՛ միջազգային ուժերի շահարկումները: Կարևորվում է Սիրադեղյանի՝ հակամարտությունը ոչ միայն որպես ռազմական կամ քաղաքական, այլև որպես ազգային հոգեբանության և պետականության ճակատագրական խնդիր դիտարկելու հանգամանքը: Ուսումնասիրության արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ Սիրադեղյանի հրապարակախոսությունը Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ առանձնանում է իր պատմական իրատեսությամբ, խորքային վերլուծություններով և ռազմավարական մտածողությամբ՝ պահպանելով արդիականությունը մինչ օրս:

Բանալի բառեր – *հրապարակախոսություն, հոդվածաշար, արձակ, աշխարհաքաղաքական իրադրություն, քաղաքականություն, գրականություն, Արցախ, դարաբաղյան հիմնահարց*

* **Հովհաննես Հովհաննիսյան** – ԵՊՀ Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի ասպիրանտ

Ованнес Овакимян – Аспирант кафедры истории новейшей армянской литературы и литературной критики ЕГУ

Hovhannes Hovakimyan – PhD Student at YSU Chair of History and Literary Criticism of Modern Armenian Literature

Էլ. փոստ՝ hovhannes.hovakimyan@ysu.am <https://orcid.org/0009-0003-2751-3957>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 30.05.2025

Գրախոսվել է՝ 03.06.2025

Հաստատվել է՝ 02.06.2025

© The Author(s) 2025

Ներածություն

Վանո Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ մեծ տեղ է զբաղեցնում դարաբաղյան (նախընտրում ենք «դարաբաղյան» ձևակերպումը, քանի որ Սիրադեղյանը հոգվածներում հենց այս ձևակերպմամբ է քննում հարցը: Նաև՝ հոգվածների հրապարակման տարիներին դեռևս շրջանառության մեջ դրված չէր «արցախյան» տարբերակը) հարցի արտացոլումը: Մա առանցքային պահ է, քանի որ Սիրադեղյանը նաև եղել է Ղարաբաղյան շարժման առաջնորդներից մեկը՝ ունենալով էական և չափազանց կարևոր դեր Հայաստանի անկախացման և պետականաստեղծման գործում: Նա «Ղարաբաղ կոմիտեի» անդամ էր, և այս հարցը, բնական է, շատ է հուզում Սիրադեղյանին: Նաև պետք է նշել, որ, ըստ էության, հենց դարաբաղյան հարցի շուրջ ունեցած տարաձայնություններն էին այդ թվականներին ՀՀ մի շարք ղեկավարների հրաժարականների գլխավոր պատճառը:

Վանո Սիրադեղյանի հրապարակախոսությունը հայ իրականության մեջ բացառիկ է իր բովանդակային խորությամբ և մեկնաբանությունների սրությամբ: Սիրադեղյանի հրապարակախոսական ու վերլուծական աշխատանքները հիմնված են ոչ միայն ընթացիկ իրադարձությունների արձանագրման, այլև դրանց պատճառահետևանքային կապերի վերհանման վրա: Սիրադեղյանի համար հրապարակախոսությունը քննադատական մտածողության խթան էր, մի տեսակ զենք, որը ուղղված էր թե՛ ներքին քաղաքական թերություններին, թե՛ արտաքին աշխարհում Հայաստանի դիրքերի խոցելիությանը:

Ղարաբաղյան հակամարտության մասին Սիրադեղյանը գրել է մի ժամանակաշրջանում, երբ խնդիրը դարձել էր ոչ միայն հայության գոյապայքարի առանցքային հարցերից մեկը, այլև հայտնվել էր միջազգային հանրության ուշադրության կիզակետում: Հակամարտությունը նրա հրապարակախոսության առանցքային թեմաներից էր, ինչը բնութագրում է թե՛ խնդրի բարդությունը, թե՛ ազգային հարցերի նկատմամբ Սիրադեղյանի խիստ պատասխանատու մոտեցումը:

Վանո Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ ակներև է խորը և բազմաշերտ մոտեցումը Ղարաբաղյան հակամարտությանը: Նրա վերլուծություններում Ղարաբաղը դիտարկվում է ոչ միայն որպես մարդու իրավունքների խնդիր և տարածքային վեճ, այլև որպես միջազգային ու տարածաշրջանային գերտերությունների շահերի կիզակետ: Սիրադեղյանը ներկայացնում է կոնֆլիկտի լուծման հնարավոր ուղիները՝ միաժամանակ վերլուծելով ներհայաստանյան քաղաքականության թուլությունները և արտաքին դերակատարների դերը:

Վերջիվերջո, Սիրադեղյանի մոտեցումները Ղարաբաղյան հակամարտության հարցում ընդգծում են այն, որ խնդրի լուծման առաջին քայլը պետք է լինի ռեալիզմը: Նրա հրապարակախոսական գործունեությունը մի տեսակ կոչ էր՝ դուրս գալու հուզական և ինտերգիոն մտածողության ծուղակից: Այս և նման

հոդվածները ցույց են տալիս, թե որքան կարևոր է պատմական և քաղաքական իրադարձությունները վերլուծել խորությամբ: Սիրադեղյանի աշխատանքներում ներկայացված են ոչ միայն կոնկրետ իրադարձությունների քննադատական վերլուծությունները, այլև հակամարտության ավելի լայն պատկերացումները, որոնք իրենց արդիականությունը չեն կորցրել նաև այսօր: Նրա համոզմամբ՝ Ղարաբաղյան հակամարտության լուծումը պահանջում է ոչ միայն գուտ ռազմական կամ քաղաքական մոտեցումներ, այլև հայ հասարակության հոգեբանական վերափոխում և իրատեսական քաղաքականություն՝ կառուցված սեփական ուժերի և հնարավորությունների ճիշտ գնահատման վրա:

Ղարաբաղյան հիմնահարցը արտաքին և ներքին շահերի բախման կիզակետ

Սիրադեղյանը առաջին հերթին անդրադառնում էր Ղարաբաղյան հիմնահարցի պատմական հիմքերին: Նրա մոտեցումը տարբերվում էր ավանդական հրապարակախոսության և պաշտոնական դիրքորոշումների կաղապարներից, քանի որ նա հաճախ էր ընդգծում, թե ինչպես են պատմական իրադարձությունները շահագործվել քաղաքական տարբեր ուժերի կողմից: Նրա խոսքում հաճախ ենք հանդիպում այն համոզմունքին, որ հակամարտությունն ունի ոչ միայն ազգային կամ կրոնական, այլև աշխարհաքաղաքական երանգներ:

Սիրադեղյանի հրապարակախոսական հոդվածներում հստակ երևում է, թե ինչպես են մեծ տերությունները ձգտում Ղարաբաղյան հակամարտությունը օգտագործել սեփական շահերի առաջնության համար: Նրա հոդվածներում մշտապես արծարծվում է այն հարցը, թե ինչու են միջազգային ուժերը հակամարտությանը մոտենում միայն իրենց շահերի տեսանկյունից՝ առանց ուշադրություն դարձնելու տարածաշրջանային և մարդկային անվտանգության հարցին: Անհրաժեշտ է նաև հիշատակել Սիրադեղյանի հայտնի հարցազրույցից մի հատված, որում ասվում է. «Մեծ պետությունների, մեծ ժողովուրդների շահերի բախման ասպարեզում փոքր ժողովուրդները շահելու բան չունեն: Փոքր ժողովուրդների շահը այն է, որ այդ մղձավանջից դուրս գան փոքր կորուստներով» (1999 թ): Նա քննադատում է թե՛ Ռուսաստանի, թե՛ ԱՄՆ-ի քաղաքականությունը՝ դրանք որակելով իբրև սառը հաշվարկների վրա հիմնված ծրագրերի ամբողջություն:

Նրա կարծիքով՝ Ռուսաստանի և ԱՄՆ-ի հակադիր շահերը խոչընդոտում էին հակամարտության կարգավորումը: «Ռուսաստանը շահագործում էր հակամարտությունը՝ Ադրբեյջանին և Հայաստանին իր քաղաքական գոտում պահելու համար՝ օգտագործելով նրանց կախվածությունը»¹: Այս դիտարկումը մատնանշում է, որ Սիրադեղյանը գիտակցում էր, թե որքան բարդ է փոքր

¹ Ինչո՞ւ է Մոսկվան «հանձնում» Քոչարյանին, «Հայկական ժամանակ», 2002 թ. մարտի 3, էջ 5:

երկրների համար գտնել սեփական շահերը մեծ տերությունների ազդեցության դաշտում:

Նրա վերլուծական հոդվածներից մեկում նշվում է. «Արդեն մեկ տարի առաջ հայկական զորքերը դուրս են եկել Ֆիզուլու և Հորադիզի գրավյալ տարածքներից: Արդեն մեկ տարի այդ տարածքները ոչ միայն ականազերծվել են (բնականաբար, ականապատման քարտեզները տվել են մերոնք), ոչ միայն վերակառուցվում են Բաքվում ԱՄՆ-ի դեսպանի հսկողությամբ, այլև այդ տարածքում բացվել է սակրավորների ուսումնարան՝ ԱՄՆ-ի ֆինանսավորմամբ»²: Այս դիտարկումը ցույց է տալիս, թե ինչպես են մեծ տերությունները շահարկում հակամարտության կողմերի գործողությունները՝ վերահսկողություն սահմանելով տարածաշրջանի բնական և տնտեսական ռեսուրսների վրա:

Սիրադեղյանը քննադատում էր նաև միջազգային հանրության մոտեցումները, որոնք հաճախ ձևավորվում էին ոչ թե հակամարտության լուծման, այլ այն շահարկելու տրամաբանությամբ: Նրա խոսքով՝ մեծ տերությունները հակված են օգտագործելու այդ խնդիրը որպես լծակ՝ տարածաշրջանում սեփական ազդեցությունն ուժեղացնելու համար: «Սոււմգայիթի գենոցիդը չէր լինի, այդքան չէինք հերստտի, այդքան չհերստտեինք՝ պատերազմ չէր սկսվի»³: Այս դիտարկմամբ Սիրադեղյանը ընդգծում է, թե ինչպես են հակամարտության սրացումները երբեմն կանխորոշվում արտաքին ուժերի միջամտությամբ:

Վանո Սիրադեղյանի հրապարակախոսությունը կարևոր նշանակություն ունի նաև միջազգային և տարածաշրջանային շահերի բախման դինամիկան հասկանալու համար: Նրա հոդվածները վերլուծում են, թե ինչպես են տարբեր ուժային կենտրոնները՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ն, Թուրքիան և Իրանը, օգտագործում Ղարաբաղյան հակամարտությունը իրենց ռազմավարական շահերը պաշտպանելու համար:

Սիրադեղյանը տեսնում էր, որ Ռուսաստանը Հարավային Կովկասում իր ներկայությունը պահպանում է հակամարտության միջոցով: Նրա խոսքով՝ Ռուսաստանը միտումնավոր թույլ չէր տալիս և խանգարում էր հակամարտության արագ կարգավորմանը՝ տարածաշրջանում վերահսկողությունը չկորցնելու նպատակով: Այս մասին նա գրում է. «Ռուսաստանը չի կարող չպաշտպանել ու չգուրգուրել Տաջիկստանի նման բուֆերը, ինչպես պահպանում է Մոնղոլիան Չինաստանի ոչ իսլամ բնակչության դեմ»⁴: Այս դիտարկումը վկայում է Ռուսաստանի ռազմավարական բուֆերային գոտիների պահպանման կարևորության մասին:

² Երբ վերինների խելքը չի հասնում, ներքինիների էլ՝ տանձին չի, «Հայկական ժամանակ», 2002 թ., մայիսի 14, էջ 2:

³ Հակառակ մեր կամքին՝ Մեդրին մնաց ՀՀ կազմում, «Հայկական ժամանակ», 2002 թ. օգոստոսի 27, էջ 5:

⁴ Պարիտետի ժամը, «Հայկական ժամանակ», 2001 թ. փետրվարի 2, էջ 8:

Սիրադեղյանը շեշտում է, որ Ռուսաստանի քաղաքականությունը մշտապես զուգակցվել է Հայաստանի թուլացման հետ: Ղարաբաղի հարցում Ռուսաստանի աջակցությունն առավելապես պայմանավորված է նրա սեփական շահերով:

Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի քաղաքականությունը, ըստ Սիրադեղյանի, հիմնված էր տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսների վերահսկման վրա: Անդրադառնալով նավթամուղերի նախագծերին՝ նա գրում է. «Եթե երկրորդ-երրորդ նավթամուղը Վրաստանով կանցնի թե Հայաստանով, Ադրբեջանի համար մեկ է: Իսկ Ռուսաստանը կուզի, որ Հայաստանով անցնի. ոչ թե հանուն Հայաստանի, այլ որ չանցնի Վրաստանով»⁵:

Սիրադեղյանի այս դիտարկումները ցույց են տալիս, որ Արևմուտքի համար Ղարաբաղի հարցը ոչ միայն քաղաքական կամ բարոյական խնդիր է, այլև տնտեսական հետաքրքրությունների անկյունաքար:

Թուրքիայի դերակատարությունը Սիրադեղյանը դիտարկում է որպես ՆԱՏՕ-ի հիմնական խողովակ՝ Հարավային Կովկասում իր ազդեցությունը տարածելու համար: Նա ընդգծում է. «Թուրքիան բուֆերային դերը կատարում է ոչ թե տարածաշրջանային կայունության համար, այլ սեփական տնտեսական և քաղաքական շահերը ամրապնդելու նպատակով»⁶: Այս դիտարկումը ցույց է տալիս, թե ինչպես է Թուրքիան օգտագործում իր ռազմավարական դիրքը միջազգային քաղաքականության մեջ:

Իրանի դեպքում Սիրադեղյանը մատնանշում է այդ երկրի երկակի քաղաքականությունը: Մի կողմից Իրանը խուսափում էր տարածաշրջանային պատերազմի մեջ ներքաշվելուց, մյուս կողմից փորձում էր սահմանափակել արևմտյան ազդեցությունը: Սա վկայում է, որ Սիրադեղյանը խորությամբ ուսումնասիրել է Իրանի ռազմավարական դիրքորոշումը:

Հրապարակախոսը հաճախ մատնանշում էր, որ միջազգային ուժերի շահերի բախումը խորացնում է հակամարտությունը՝ թույլ չտալով Հայաստանին և Ադրբեջանին կառուցողական երկխոսություն սկսել: Նա գրում է. «Մեծ տերությունների շահերի բախումն ավելի խորացրեց տարածաշրջանային խնդիրները՝ վերածելով դրանք միջազգային ճգնաժամի»⁷:

Այս դիտարկումները վկայում են, որ Սիրադեղյանի հրապարակախոսությունը ոչ միայն լուսաբանում էր միջազգային ուժերի ազդեցությունը Ղարաբաղյան հակամարտության վրա, այլև խորը վերլուծում դրանց հետևանքները Հայաստանի ու տարածաշրջանի ապագայի համար: Նրա հարցադրումները մնում են արդիական միջազգային քաղաքականության և տարածաշրջանային հակամարտությունների բարդությունները հասկանալու առումով:

⁵ Պարիտետի ժամը 4, «Հայկական ժամանակ», 2001 թ. փետրվարի 20, էջ 3:

⁶ Թուրքերը Մեդրին տանում են, «Հայկական ժամանակ», 2001 թ. մարտի 8, էջ 5:

⁷ Երբ վերինների խելքը չի հասնում, ներքինիների էլ՝ տանձին չի:

Սիրադեղյանի վերլուծություններում հաճախ հանդիպում ենք այն համոզմունքին, որ հակամարտության շուրջ Հայաստանում ձևավորված քաղաքական մոտեցումները եղել են ոչ միայն անկատար, այլև երբեմն կործանարար: Նրա գնահատմամբ՝ Հայաստանի քաղաքական վերնախավը հաճախ չի հասկացել հակամարտության իրական մասշտաբները: Այդ մասին նա գրել է. «Հայաստանը պետք է կարողանար ձևավորել իր խաղի կանոնները, բայց հակառակը՝ խաղում էր ուրիշների կանոններով»⁸: Սա գալիս է հաստատելու այն տեսակետը, որ Սիրադեղյանի համար ազգային շահերի պաշտպանությունը պահանջում էր ռազմավարական մտածողություն, ոչ թե կարճաժամկետ շահերի հետապնդում:

Վանո Սիրադեղյանի հրապարակախոսությունը Ղարաբաղյան հակամարտության հարցում առանձնանում է ռազմավարական խորությամբ և հստակ տեսլականով: Նա հակամարտության զարգացումները դիտարկում է որպես Հայաստանի պետականության կայունության, հասարակական միասնության և միջազգային հարաբերությունների բարդ փոխկապակցված գործընթաց: Հակամարտության տարբեր փուլերում Սիրադեղյանը ներկայացնում է թե՛ այդ ժամանակաշրջանի մարտահրավերները, թե՛ դրանց լուծման հնարավոր ուղիները:

Սկզբնական փուլում Սիրադեղյանը շեշտում էր համահայկական համախմբման անհրաժեշտությունը: Նրա կարծիքով՝ ազգային միասնականության պահպանման կարիքները գերակա էին, սակայն դրանք բախվում էին պատերազմի սուր մարտահրավերներին: Հետագայում նա առավել մեծ ուշադրություն է դարձնում դիվանագիտական ճկունության անհրաժեշտությանը: Նրա կարծիքով՝ տարածաշրջանում ձևավորվում է նոր քաղաքական քարտեզ, որտեղ Հայաստանի դերը կախված էր ոչ միայն ռազմական հաջողություններից, այլև արտաքին քաղաքական ռեսուրսների արդյունավետ օգտագործումից. «Հայաստանը խրվում էր ոչ միայն ռեսուրսների սպառման, այլև դիվանագիտական միամտության թակարդի մեջ»⁹: Սիրադեղյանը համարում էր, որ դիվանագիտական տապալումները հաճախ սահմանափակում են հակամարտության արդարացի լուծման հնարավորությունները:

Ավելին՝ Սիրադեղյանը հասկանում էր, որ Հայաստանի ներսում հակամարտությունը հաճախ դառնում է ներքաղաքական պայքարի գործիք: Նա շեշտում է, որ «Հայաստանը այս 13 տարիներին այնքան քաղաքական, նյութական, մարդկային ռեսուրսներ վատնեց Ղարաբաղի վրա, որ հասավ մի սահման, որից հետո սկսվում է պետականության հիմքերի խարխլումը»¹⁰: Այս խոսքերով Սիրադեղյանը քննադատում էր այն քաղաքական գործիչներին, ով-

⁸ ՀՀ-ին փոռը տալու տարբերակը, «Հայկական ժամանակ» 2002 թ. մարտի 28, էջ 7:

⁹ Երբ վերինների խելքը չի հասնում, ներքինիների էլ՝ տանձին չի:

¹⁰ ՀՀ-ին փոռը տալու տարբերակը:

քեր, նրա համոզմամբ, Ղարաբաղի հարցը օգտագործում էին իրենց իշխանությունը ամրապնդելու նպատակով՝ անտեսելով երկրի ռազմավարական շահերը:

Ներքին քաղաքականության առումով Սիրադեղյանը մեծապես կարևորում էր հասարակական համերաշխության ազդեցությունը հակամարտության ընթացքի և արդյունքների վրա: Սակայն, ըստ նրա, պատերազմը խորացնում էր Հայաստանի քաղաքական ճգնաժամը: «Հայկական բանակի թիկունքը երկրի տնտեսությունը պիտի լիներ, որ գոյություն չունի, և ժողովրդի միաբանությունը, որը անհնար դարձավ հոկտեմբերի 27-ից հետո»¹¹: Սիրադեղյանի համար քաղաքական ճգնաժամը ոչ միայն բարդացնում էր հարցի լուծման ընթացքը, այլև սպառնում էր Հայաստանի կայունությանը:

Արդյունքում Սիրադեղյանի հրապարակախոսությունը ներկայացնում է ղարաբաղյան հարցի բարդությունը՝ միաժամանակ առաջարկելով դրա հաղթահարման ռազմավարական ուղիներ: Նրա դիտարկումները ցույց են տալիս, որ հարցի լուծման երկարաձգումը վտանգում էր Հայաստանի հասարակական, տնտեսական և քաղաքական համակարգերը. «Հայաստանը խաղում է ուրիշների կանոններով: Հաղթանակը միայն այն ժամանակ է մերը, երբ այն ունենում է նաև մեր կանոնները»¹²: Այս եզրահանգումը բացահայտում է Սիրադեղյանի այն հիմնարար համոզմունքը, որ հայկական կողմի հաջողությունը կախված է սեփական կանոններով խաղ ձևավորելուց:

Վանո Սիրադեղյանը Ղարաբաղյան հակամարտությունը չէր դիտարկում միայն որպես արտաքին և միջազգային շահերի բախման դաշտ: Նա արձանագրում էր, որ ներքին քաղաքական ուժերի պառակտված վիճակը և գաղափարական բախումները խոչընդոտ են խնդրի կառուցողական լուծման համար:

Սիրադեղյանը բազմիցս ընդգծում էր կուսակցությունների պատասխանատվությունը հակամարտության սրման հարցում: Նա նշում է, որ «Հայաստանի բոլոր քաղաքական խմբակները, ավել կամ պակաս չափով, կապվում են Դաշնակցությանը»¹³: Մա ցույց է տալիս, որ Սիրադեղյանը քննադատում էր կուսակցական շահերի գերակայությունը ազգային անվտանգության և պետական շահերի նկատմամբ: Սիրադեղյանը խիստ քննադատում էր նաև այն կուսակցություններին, որոնք, ըստ նրա, վերածվել էին ներհայաստանյան քաղաքական գործիքների՝ մեծ տերությունների ազդեցությունը սպասարկելու համար: Նա նշում է. «Հայկական կուսակցապետերը համերաշխորեն թյուրի-

¹¹ Նույն տեղում:

¹² Ինչո՞ւ է Մոսկվան «հանձնում» Քոչարյանին:

¹³ Երբ վերինների խելքը չի հասնում, ներքինիների էլ՝ տանձին չի:

մացության մեջ են պահում ժողովրդին՝ հավատացնելով, թե որևէ բանակ կարող է ուժեղ լինել աղետյալ թիկունք ունեցող երկրում»¹⁴։ Միրադեղյանը համարում էր, որ քաղաքական ճգնաժամը խորացնում է երկրի սոցիալական և ռազմական անկայունությունը։ Հեղինակը հակամարտությունը դիտարկում է նաև որպես ներքին իշխանության լեգիտիմության միջոց։ Նա գրում է. «Անհրաժեշտ է հիշել, որ Ղարաբաղի հարցը հաճախ օգտագործվում էր իշխանության կողմից՝ որպես հասարակությանը կարճաժամկետ կառավարելու գործիք»¹⁵։ Սա վկայում է, որ հակամարտությունը, ըստ Միրադեղյանի, դարձել էր ներքին քաղաքական մանիպուլյացիայի գործիք՝ առանց իրական խաղաղություն ապահովելու մտադրության։ Հատկապես հետաքրքրական է այն կարծիքը, որ Հայաստանի իշխանությունները հաճախ դրսևորում էին ռազմատենչ հոետորաբանություն, որը բացասաբար էր անդրադառնում հակամարտության խաղաղ կարգավորման վրա։

«Կառավարության մակարդակով հույները բանակցում են արդեն Ադրբեջանի հետ՝ ադրբեջանական գազը ապագայում Թուրքիայից Հունաստան և Բալկաններով՝ Եվրոպա քաշելու համար»¹⁶։ Միրադեղյանի այս դիտարկումը ակնարկում է, որ ռազմավարական նշանակություն ունեցող որոշումները կարող էին սակարկության առարկա դառնալ։ Միրադեղյան հրապարակախոսը հատկապես կարևորում էր, որ Ղարաբաղյան հարցը խորացնում է Հայաստանի տնտեսական ճգնաժամը։ Նա նշում է. «Հայաստանի այս չորս տարիների արտաքին տխմար քաղաքականությունը աներևակայելի չափերի ամրապնդել է Ադրբեջանի և Թուրքիայի դիրքերը տարածաշրջանում»¹⁷։ Սա վկայում է, որ նա մեծ կարևորություն էր տալիս տնտեսական հիմքերի զարգացմանը՝ հակամարտության լուծման և պետության կայունության ապահովման համար։

Միրադեղյանը հաճախ անդրադառնում է հայ հասարակության ներսում առկա պառակտվածությանը՝ նշելով, որ այն խոչընդոտում է ազգային համախմբվածության գաղափարի իրականացումը։ Նա նշում է. «Հին Մփյուռքը ունի իր հայրենիքը, որը ոչ մի կերպ չի նույնանում Հայաստանի տարածքի հետ, իսկ միայն Հայաստանի ժողովուրդը, փաստորեն, չունի հայրենիք»¹⁸։ Միրադեղյանը համարում էր, որ ազգային միասնականության բացակայությունը լուրջ վտանգ է Հայաստանի և Ղարաբաղի ապագայի համար։

Հայաստանի դերը տարածաշրջանային զարգացումներում Միրադեղյանը ներկայացնում է այնպես, որ Հայաստանը ասես սահմանափակված է արտաքին ուժերի շահերով և չունի բավարար միջոցներ՝ էական ազդեցության գոտի

¹⁴ ՀՅԴ-ին փոխը տալու տարբերակը։

¹⁵ Հայկական Թալիբան, «Հայկական ժամանակ», 2002թ. մարտի 7 էջ 10։

¹⁶ Երբ վերինների խելքը չի հասնում, ներքինիների էլ՝ տանձին չի։

¹⁷ Նույն տեղում։

¹⁸ Նույն տեղում։

ձևավորելու համար: Նա գրում է. «Հայաստանը չունի այն կշիռը, որ կարողանա ինքնուրույն որոշել հակամարտության ելքը կամ իր դաշնակիցներին պարտադրել իր պայմանները»¹⁹:

Այս իրավիճակը, ըստ նրա, պայմանավորված է ոչ միայն արտաքին միջամտություններով, այլև ներքին քաղաքական անկայունությամբ: Հատկապես Տեր-Պետրոսյանի հրաժարականի և հետագա կառավարությունների կողմից կոշտ, բայց անհետևողական քայլերի ֆոնին Հայաստանը շարունակաբար կորցրել է իր նախաձեռնողականությունը:

Սիրադեղյանը նկատում է նաև ներհայաստանյան քաղաքական շահերի գերակայությունը ազգային խնդիրների նկատմամբ՝ պնդելով, որ նման մոտեցումը ոչ միայն չի օգնում կոնֆլիկտի լուծմանը, այլև խորացնում է այն:

Սիրադեղյանի հրապարակախոսության մեջ տեղ է գտնում նաև քաղաքակրթությունների բխման գաղափարը, որն ընդգծում է Ղարաբաղյան հակամարտության ավելի լայն՝ տարածաշրջանային և գլոբալ համատեքստը: Նրա վերլուծությունները ցույց են տալիս, որ այս հակամարտությունն ընդամենը տեղական նշանակություն չունի, այլ խարսխված է միջազգային հարթակում ձևավորվող ուժերի հավասարակշռության վրա:

Նա Ղարաբաղյան հակամարտությունը ներկայացնում է ոչ միայն քաղաքական կամ տարածքային, այլև ավելի լայն քաղաքակրթական հարթության մեջ՝ առանձնացնելով Ռուսաստանի ու Արևմուտքի հետ իսլամական աշխարհի հարաբերությունների հանգամանքը: Նա գրում է. «Իսլամի ծագումը նախորդեց դեպի Միջերկրական ծովի հյուսիսային ու արևմտյան բարեխառն կլիմայով ամերեն ու դեպի Կասպյան ավազանի ոռոգելի հողերը իսլամի դրոշի տակ միավորված արաբական ցեղերի արշավանքին»²⁰:

Իսլամական աշխարհի և քրիստոնեական քաղաքակրթության միջև բախումը ունի ոչ միայն կրոնական, այլև սոցիալական և տնտեսական պատճառներ: Հեղինակը շեշտում է, որ Արևմուտքն այս մարտահրավերին արձագանքում է ավելի բարդ ռազմավարությամբ:

Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ Հայաստանը հաճախ ընկալվում է որպես քրիստոնեական աշխարհի «առաջապահ», մինչդեռ այս դիրքավորումը ավելի շատ պատրանք է, քան իրականություն: Նա գրում է. «Մինչդեռ իրականում՝ նա վաղուց ապահովության այլ համակարգի անցած տիրույթներում անելիք ունենալու պատրանքով ծերացող, հավատարիմ ու ժամանակավրեպ շան է նման...»²¹:

Այս դիտարկումը ցույց է տալիս, որ Հայաստանը հաճախ բախվում է քաղաքակրթական շահերի հակասություններին՝ չկարողանալով ամբողջությամբ գիտակցել իր դերակատարությունը այս պայքարում: Սիրադեղյանը

¹⁹ Ինչո՞ւ է Մոսկվան «հանձնում» Քոչարյանին:

²⁰ Պարիտետի ժամը 4:

²¹ Նույն տեղում:

քննադատում է միջազգային դաշինքներին Հայաստանի կուրորեն ապավինելը՝ ընդգծելով, որ այդ դաշինքները հաճախ պայմանավորված են մեծ տերությունների շահերով: «Արևմուտքը սոցիալական այդ արհավիրքին դիմագրավում է ազատ հասարակությանը հատուկ միակ եղանակով՝ ինտեգրելով կամ ինտեգրվելով»²²:

Նա հստակեցնում է, որ այս ինտեգրումը չի ներառում Հայաստանին, ինչը ստիպում է հայ ժողովրդին առավելապես ապավինել իր ներքին կարողություններին և խուսափել արտաքին ուժերից կախվածության մեջ ընկնելուց: Այս պարագայում նա բացահայտում է Ռուսաստանի և Ադրբեջանի ռազմավարական հարաբերությունների խորությունը՝ ընդգծելով, որ Ռուսաստանը միշտ գերադասում է Ադրբեջանի հետ համագործակցությունը, ինչի արդյունքում Հայաստանը հաճախ մնում է մեկուսացված: Նա նշում է. «Ռուսաստանը դատապարտված էր Ադրբեջանին դաշնակից-բուֆեր ունենալ...»²³:

Այս քաղաքականությունը ոչ միայն չի համապատասխանում Հայաստանի շահերին, այլև էապես խաթարում է տարածաշրջանային կայունությունը:

Քաղաքակրթական բախումը և տարածաշրջանային ուժերի շահերը տեղական խնդրի սահմանները վաղուց մոռանալ են տվել՝ Ղարաբաղյան հարցը դարձնելով համաշխարհային մեծ քաղաքականության կարևոր բաղկացուցիչ: Միրադեղյանը կոչ է անում առավել զգոնություն ցուցաբերել և ճիշտ կողմնորոշվել միջազգային հարաբերությունների այս բարդ համակարգում՝ խուսափելով ինքնախաբեության և արտաքին շահերի շահագործման գոհ դառնալուց:

Եզրակացություններ

Ուսումնասիրության արդյունքում եզրակացրել ենք, որ Վանո Միրադեղյանի հրապարակախոսությունը Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ առանձնանում է իր խորաթափանց վերլուծություններով, սթափ իրատեսությամբ և ազգային-քաղաքական արժեքների փիլիսոփայական վերաիմաստավորմամբ: Նրա մոտեցումները ներառում են թե՛ պատմական հենքի վրա հիմնված գնահատականներ, թե՛ տարածաշրջանային և միջազգային քաղաքականության դինամիկայի մասին հստակ պատկերացումներ:

Միրադեղյանը խորը ցավով արձանագրում էր, որ Հայաստանի ներքին պառակտումն ու քաղաքական թուլությունը հաճախ դառնում են արտաքին ուժերի շահարկումների գործիք: Նա պնդում էր, որ Ղարաբաղյան հարցում ազգային միասնությունն ու ռազմավարական մտածողությունը ունեն կենսական նշանակություն: Հատկապես իր հոդվածներում նա հաճախ նշում է, որ առանց երկրի ներսում կայունության և փոխըմբռնման անհնար է միջազգային ասպարեզում Հայաստանի շահերը պաշտպանելը:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում:

Միրադեղյանի դիրքորոշումներում նկատվում էր հակամարտության լուծման հավասարակշռված մոտեցում՝ առանց ծայրահեղականության: Նա ընդգծում էր, որ այս հարցում ճիշտ որոշումները պետք է հիմնվեն ոչ միայն պատմական արդարության, այլև քաղաքական իրատեսության վրա: Ղարաբաղյան հարցը Միրադեղյանի համար ոչ միայն տարածքային, այլև ազգային ինքնության, արժանապատվության և ապագայի կերտման հարց էր:

Այսպիսով՝ Միրադեղյանը մշտապես ահագանգում է այն մասին, որ քաղաքականությունը չպետք է գերակայի ազգային շահերին, և որ Հայաստանի հաղթանակը հնարավոր է միայն այն դեպքում, երբ երկիրը կձգտի միաժամանակ ապահովել իր ներքին միասնությունը, տնտեսական կայունությունն ու արտաքին դիվանագիտական ճկունությունը:

ОВАННЕС ОВАКИМЯН – Освещение карабахской проблемы в публицистике Вано Сирадегяна. – Статья посвящена систематическому анализу отражения карабахского конфликта в публицистике Вано Сирадегяна. Для Сирадегяна карабахский вопрос был не просто темой, а отправной точкой его публицистики и центральной осью его политической биографии. В статье показано, как Сирадегян подходил к проблеме, одновременно рассматривая её в историческом, политическом, геополитическом и внутривнутриполитическом контексте.

Анализируются публицистические статьи и выступления Сирадегяна, в которых он критикует как стратегические просчёты властей Армении, так и манипуляции со стороны международных сил. Особое внимание уделяется тому, что Сирадегян рассматривал конфликт не только как военную или политическую проблему, но и как судьбоносный вопрос национальной психологии и государственности.

В результате исследования делается вывод, что публицистика Сирадегяна по поводу карабахского конфликта отличается историческим реализмом, глубокой аналитикой и стратегическим мышлением, сохраняя свою актуальность и по сей день.

Ключевые слова – публицистика, серия статей, проза, геополитическая ситуация, политика, литература, Арцах, карабахская проблема

HOVHANNES HOVAKIMYAN – Articulations of the Karabakh Issue in Vano Siradeghyan's Publicist Writings. – This article is dedicated to a systematic analysis of the reflection of the Nagorno-Karabakh conflict in Vano Siradeghyan's journalistic writings. For Siradeghyan, the Karabakh issue was not merely a topic but served as a starting point for his publicist work and a central axis of his political biography. The article demonstrates how Siradeghyan approached the issue, simultaneously examining its historical, political, geopolitical, and domestic dimensions.

The analysis focuses on Siradeghyan's journalistic articles and speeches, in which he criticizes both the strategic shortcomings of the Armenian authorities and the manipulations of international powers. Special emphasis is placed on Siradeghyan's view of the conflict not only as a military or political matter but also as a decisive issue of national psychology and statehood.

As a result of the study, it is concluded that Siradeghyan's journalistic work on the Karabakh conflict stands out for its historical realism, in-depth analysis, and strategic thinking—maintaining its relevance to this day.

Key words – *publicism, article series, prose, geopolitical situation, politics, literature, Artsakh, Nagorno-Karabakh issue*

Գրականության ցանկ

Սիրադեղյան, Վ. Պարիստեթի ժամը, «Հայկական ժամանակ», 2001, փետրվարի 2, թիվ 14: (Siradeghyan, V. Parit'eti zhamë, “Haykakan zhamanak”, 2001, p'etrvari 2, t'iv 14).

Սիրադեղյան, Վ. Պարիստեթի ժամը 4, «Հայկական ժամանակ», 2001, փետրվարի 20, թիվ 26: (Siradeghyan, V. Parit'eti zhamë 4, “Haykakan zhamanak”, 2001, p'etrvari 20, t'iv 26).

Սիրադեղյան, Վ. Թուրքերը Մեղրին տանում են, «Հայկական ժամանակ», 2001, մարտի 8, թիվ 38: (Siradeghyan, V. Turk'ery Meghrin tanum en, “Haykakan zhamanak”, 2001, mart'i 8, t'iv 38).

Սիրադեղյան, Վ. ՀՅԴ-ին փուռը տալու տարբերակը, «Հայկական ժամանակ», 2001, մարտի 28, թիվ 51: (Siradeghyan, V. HJD-in p'urry talu tarberaky, “Haykakan zhamanak”, 2001, mart'i 28, t'iv 51).

Սիրադեղյան, Վ. Ինչո՞ւ է Մոսկվան «հանձնում» Քոչարյանին, «Հայկական ժամանակ», 2002, մարտի 3, թիվ 34: (Siradeghyan, V. Inch'u e Moskvay “handznum” Kocharyanin, “Haykakan zhamanak”, 2002, mart'i 3, t'iv 34).

Սիրադեղյան, Վ. Հայկական Թալիբան, «Հայկական ժամանակ», 2002, մարտի 7, թիվ 37: (Siradeghyan, V. Haykakan Taliban, “Haykakan zhamanak”, 2002, mart'i 7, t'iv 37).

Սիրադեղյան, Վ. Երբ վերինների խելքը չի հասնում, ներքինիների էլ՝ տանձին չի, «Հայկական ժամանակ», 2002, մայիսի 14, թիվ 82: (Siradeghyan, V. Yerb verinneri khelk'y chi hasnum, nerk'yevinneri el-tandzin chi, “Haykakan zhamanak”, 2002, mayisi 14, t'iv 82).

Սիրադեղյան, Վ. Հակառակ մեր կամքին՝ Մեղրին մնաց ՀՀ կազմում, «Հայկական ժամանակ», 2002, օգոստոսի 27, թիվ 140: (Siradeghyan, V. Hakarak mer kamqin–Meghrin mnats HH kazmum, “Haykakan zhamanak”, 2002, ogostosi 27, t'iv 140).

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Կայք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հեռ. 060 710 218, 060 710 219

Հրատարակչական խմբագիր և
թողարկման պատասխանատու՝
Издательский редактор и
ответственный выпуска
Publishing Editor and Issued by

Արմեն Հովակիմյան

Армен Овакимян
Armen Hovakimyan

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գայանե Գրիգորյան
Гаяне Григорян
Gayane Grigoryan

Ստորագրված է տպագրության 03. 06. 2025: